



Հայաստանի տնտեսական եւ սոցիալական խնդիրները Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ծրագրերում (ըստ դիտարկման արդյունքների)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի աջակցությամբ իրականացրել է 2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններին մասնակցող 9 կուսակցությունների ու դաշինքների նախընտրական ծրագրերի դիտարկում (մոնիտորինգ): Ուսումնասիրության նպատակն էր պարզել, թե այդ փաստաթղթերում ինչ մաս են կազմում երկրի տնտեսական ու սոցիալական խնդիրները եւ դրանց ինչ լուծումներ են առաջարկվում: Այդ թեմաներին վերաբերող հատվածները, որպես դիտարկման առարկա, առանձնացվել են ընդհանուր տեքստից եւ ենթարկվել են քանակական եւ որակական վերլուծության:

Ըստ դիտարկման մեթոդաբանության՝ տնտեսական հարցերը բաժանվել են հետևյալ 3 կատեգորիաների.

- Էկոնոմիկա. արդյունաբերություն/գյուղատնտեսություն/տուրիզմ/SS ոլորտ եւ այլն (ընթացիկ քաղաքականություն եւ ներկա իրավիճակ),
- ՀՀ տնտեսական ռազմավարությունը (տեսլականը),
- արտաքին տնտեսական կապեր (ԵԱՏՄ/Ռուսաստան, ԵՄ, Վրաստան, Իրան):

Սոցիալական թեմաները բաժանվել են հետևյալ 4 կատեգորիաների.

- զբաղվածություն/գործազրկություն,
- աշխատանքային իրավունքներ,
- առողջապահություն,
- կենսաթոշակային համակարգ/սոցիալական նպաստներ/ավանդների վերադարձ/խոցելի խմբերի օժանդակություն:

Քանակական վերլուծություն իրականացնելիս դիտարկողները վեր են հանել, թե յուրաքանչյուր նախընտրական ծրագրում որքան տեղ է տրվել տնտեսական եւ սոցիալական թեմաներին: Ընդհանուր տեքստն ու առանձին այդ մասերը չափվել են նիշերի քանակով, որոնք վերածվել են էջերի (1800 նիշը = 1 էջի), ինչպես նաև՝ տոկոսների՝ դրանց հարաբերակցությունը առավել ակնառու ներկայացնելու համար:

Արժարժված տնտեսական եւ սոցիալական հարցերի **որակական վերլուծությունը** մոնիտորինգային խումբն իրականացրել է հետեւյալ չափորոշիչներով.

- ներկա իրավիճակի ընդհանուր գնահատականը,
- վերհանվող խնդիրները,
- առաջարկությունների առկայությունն ու դրանց բովանդակությունը:

Տնտեսական ու սոցիալական խնդիրներին վերաբերող հատվածների ուսումնասիրությունից զատ դիտարկման ընթացքում արձանագրվել են նաև բոլոր այն թեմաները, որոնց յուրաքանչյուր քաղաքական ուժ անդրադարձել է իր նախընտրական ծրագրում: Մակայն համաձայն մեթոդաբանության՝ այդ թեմաները չեն վերլուծվել եւ ներկայացվում են ցանկի տեսքով:

Դիտարկման քանակական տվյալներն արտացոլող աղյուսակներում, ինչպես նաև ծրագրերի բովանդակությանը վերաբերող մասում, քաղաքական ուժերի հերթականությունը համապատասխանեցրել ենք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ս. թ. փետրվարի 17-ին հրապարակած ցուցակին, այն է՝ «Ելք» կուսակցությունների դաշինք, «Ազատ դեմոկրատներ» կուսակցություն, «Հայկական վերածնունդ» կուսակցություն, «Ծառուկյան» կուսակցությունների դաշինք, «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինք, Հայաստանի Հանրապետական կուսակցություն, Հայաստանի Կոմունիստական կուսակցություն, «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինք, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն:

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության արդյունքները, 2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններն ու դաշինքներն իրենց ծրագրերում բավական մեծ տեղ են հատկացրել տնտեսական եւ սոցիալական խնդիրներին: Ստորեւ ներկայացված աղյուսակում երևում է, որ քաղաքական ուժերի մեծ մասն այդ ոլորտներին նվիրել է ծրագրերի ծավալի մեկ երրորդից երկու երրորդը:

Աղյուսակ 1

N	Կուսակցություններ եւ դաշինքներ	Նախընտրական ծրագրերի ընդհանուր ծավալը (նիշ/էջ)	Տնտեսական եւ սոցիալական հարցերին նվիրված հատվածները (նիշ/էջ)	Տոկոսային հարաբերակցություն
1	«ԵԼՔ» կուսակցությունների դաշինք	22712 նիշ/ 12,6 էջ	10142 նիշ/ 5,6 էջ	44,65 %
2	«Ազատ դեմոկրատներ» կուսակցություն	43406 նիշ / 24 էջ	15341 նիշ/ 8,5 էջ	35,4%
3	«Հայկական վերածնունդ» կուսակցություն	10664 նիշ / 6 էջ	7106 նիշ / 3,9 էջ	66,63 %

4	«Ծառուկյան» կուսակցությունների դաշինք	2370 նիշ / 1,3 էջ	2370 նիշ / 1,3 էջ	100%
5	«Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինք	13879 նիշ / 7,7 էջ	3665 նիշ / 2 էջ	26,40%
6	Հայաստանի Հանրապետական կուսակցություն	58996 նիշ/ 32,8 էջ	24187 նիշ/ 13,4 էջ	41%
7	Հայաստանի Կոմունիստական կուսակցություն	23674 նիշ/ 13 էջ	17125 նիշ/ 9,5 էջ	72,33%
8	«Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինք	52548 նիշ/ 29 էջ	12570 նիշ/ 7 էջ	23,92%
9	Հայ Յեղափոխական Դաշնակցություն	17867 նիշ/ 10 էջ	7892 նիշ/ 4,4 էջ	44,17%

Տոկոսային առումով «Ծառուկյան» դաշինքի ցուցանիշն ամենաբարձրն է. 15 կետանոց նախընտրական փաստաթուղթն ամբողջությամբ սոցիալ-տնտեսական հարցերին է վերաբերում: Սակայն այս առումով ամենացածր ցուցանիշն ունեցող «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքի ծրագիրը նույն թեմաներին նվիրված հատվածների ծավալի բացարձակ թվերով՝ նիշերի/էջերի քանակով ավելի քան 5 անգամ գերազանցում է «Ծառուկյան» դաշինքի «15 կետերը»: Առհասարակ 9 քաղաքական ուժերից ՕԲՕ-ի նախընտրական ծրագիրն ամենաձավալուններից է՝ 29 էջ, սրան գերազանցում է միայն Հանրապետական կուսակցության ծրագիրը՝ մոտ 33 էջ: Տնտեսական եւ սոցիալական հարցերին նվիրված էջերի (նիշերի) քանակով նույնպես ՀՀԿ-ն առաջատար է, բայց ահա այդ հատվածների՝ ծրագրի ընդհանուր ծավալի հետ տոկոսային հարաբերակցությամբ իշխող կուսակցությունը հետ է 5 մրցակիցներից՝ «Ծառուկյան» դաշինքից, Կոմկուսից, «Հայկական վերածնունդ»-ից, «Ելք»-ից, ՀՅԴ-ից:

Եթե նախորդ աղյուսակում մենք ցույց տվեցինք, թե յուրաքանչյուր քաղաքական ուժի նախընտրական ծրագրում ինչ տեղ է հատկացված սոցիալ-տնտեսական խնդիրներին ընդհանուր առմամբ, ապա հաջորդում ներկայացնում ենք, թե տնտեսական ու սոցիալական թեմաներին վերաբերող հատվածներն ինչ ծավալի են առանձին-առանձին եւ ինչպիսին է դրանց տոկոսային հարաբերակցությունը:

Աղյուսակ 2

N	Կուսակցություններ եւ դաշինքներ	Տնտեսական հարցերին նվիրված ծավալ (նիշ/էջ)	Սոցիալական հարցերին նվիրված ծավալ (նիշ/էջ)	Տոկոսային հարաբերակցություն (%)
1	«ԵԼՔ» կուսակցությունների դաշինք	6134 նիշ/ 3,4 էջ	4008 նիշ/ 2,2 էջ	60,48% / 39,52%
2	«Ազատ դեմոկրատներ» կուսակցություն	11716 նիշ / 6,5 էջ	3625 նիշ/ 2 էջ	76,37%/ 23,63%
3	«Հայկական վերածնունդ» կուսակցություն	4203 նիշ / 2,3 էջ	2903 նիշ / 1,6 էջ	59,15% / 40,85%
4	«Ծառուկյան» կուսակցությունների դաշինք	883 նիշ / 0,5 էջ	1487 նիշ / 0,8 էջ	37,26% / 62,74%

5	«Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինք	2571 նիշ / 1,4 էջ	1094 նիշ / 0,6 էջ	70,15% / 29,85%
6	Հայաստանի Հանրապետական կուսակցություն	14825 նիշ/ 8,2 էջ	9362 նիշ / 5,2 էջ	61,29% / 38,71
7	Հայաստանի Կոմունիստական կուսակցություն	11963 նիշ/ 6,6 էջ	5162 նիշ / 2,9 էջ	69,86% / 30,14%
8	«Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինք	7711 նիշ / 4,3 էջ	4859 նիշ / 2,7 էջ	61,34% / 38,66%
9	Հայ Յեղափոխական Դաշնակցություն	4699 նիշ/ 2,6 էջ	3193 նիշ / 1,8 էջ	59,54% / 40,46%

Ինչպես վկայում են աղյուսակում բերված տվյալները, գրեթե բոլոր քաղաքական ուժերն իրենց նախընտրական ծրագրերում ավելի շատ տեղ են հատկացրել տնտեսական, քան սոցիալական թեմաներին (բացառություն է միայն «Ծառուկյան» դաշինքը, որի «15 քայլերում» սոցիալական բաղադրիչը գերակշռում է): Ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ դաշինքների մեծամասնության այս մոտեցումը թույլ է տալիս ենթադրել, որ նրանք նախատեսում են լուծել սոցիալական խնդիրները նախելատառաջ տնտեսությունը ճգնաժամից հանելու միջոցով:

Այդուհանդերձ, ծրագրերի բովանդակությունն ուսումնասիրելիս դիտարկող խումբն արձանագրել է, որ թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական թեմաներն արժարժեղիս անխտիր բոլոր քաղաքական ուժերին չի հաջողվել խուսափել զուտ հոչակագրային դրույթներից, այդ թվում՝ նաեւ այն մասերում, որտեղ պահանջվում են կոնկրետ հաշվարկներ եւ հիմնավորումներ, եւ դրա հետեւանքով ընտրողին պարզ չի դառնում, թե ինչի հաշվին եւ ինչպես են լուծվելու առկա խնդիրներն ու իրականացվելու կարելուր նպատակները:

Այն, թե յուրաքանչյուր կուսակցություն և դաշինք իր նախընտրական ծրագրում ինչ տնտեսական եւ սոցիալական խնդիրներ է բարձրացրել ու ինչ լուծումներ է առաջարկել, ներկայացնում ենք ստորև:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ

Ինչպե՞ս են խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններն ու դաշինքները գնահատում երկրի արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի եւ տնտեսության այլ ոլորտների վիճակը: Դրանց զարգացման ռազմավարության առումով ի՞նչ տեսլական ունեն: Արտաքին տնտեսական կապերից որո՞նք են գերակա եւ որո՞նք լրացուցիչ խթանման կարիք ունեն: Ի՞նչ վիճակում է սոցիալական ոլորտը եւ ի՞նչ է առաջարկվում դրա բարելավման համար: Ինչպե՞ս է նվազեցվելու գործազրկությունը եւ ինչպե՞ս են պաշտպանվելու աշխատանքային իրավունքները: Ի՞նչ է առաջարկվում առողջապահության զարգացման եւ կենսաթոշակների, սոցիալական վճարների համակարգի բարելավման համար:

Նախընտրական ծրագրերը դիտարկելիս ահա այս թեմաներն են գլխավորապես դարձել ուսումնասիրության առարկա:

Ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության եւ դաշինքի ծրագրի սոցիալ-տնտեսական հատվածների վերաբերյալ ամփոփ տեղեկություններ տրամադրելու համար այստեղ ներկայացնում ենք ե՛ւ դրանց բովանդակությունը, ե՛ւ ավելի մանրամասնած քանակական տվյալները: Ինչպես նշվել է, քաղաքական ուժերի հերթականությունը՝ ըստ ԿԸՀ ցուցակի է:

«ԵԼՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ

«Ելք» դաշինքի նախընտրական ծրագիրը կազմում է 22712 նիշ, ինչը համապատասխանում է 12,6 էջին:

Նախընտրական ծրագրի տնտեսական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 6134 նիշ, ինչը համապատասխանում է 3,4 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 27 տոկոսն է կազմում:

Ծրագրի սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 4008 նիշ, ինչը համապատասխանում է 2,2 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 17,65 տոկոսն է կազմում:

Այսպիսով, նախընտրական ծրագրում սոցիալական և տնտեսական հարցերին վերաբերող հատվածները կազմում են ծրագրի ընդհանուր ծավալի 44,65 տոկոսը:

Տնտեսական եւ սոցիալական խնդիրներից բացի «Ելք»-ի ծրագրում զետեղվել են հետևյալ թեմատիկ բաժինները՝ «Զինված ուժեր», «Արտաքին քաղաքականություն», «Հայաստանի բնակչության թիվը հնարավորինս կարճ ժամկետում կրկնապատկելու միջոցը Մեծ հայրենադարձությունն է», «Պայքար կոռուպցիայի դեմ», «Կրթություն եւ գիտություն», «Բնապահպանություն», «Քաղաքական հետապնդումների բացառում»:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՈՐՏ

«Ելք» դաշինքն ընտրությունների արդյունքում իշխանության քվե ստանալու պարագայում նախատեսում է Հայաստանը բարձր տեխնոլոգիական արդյունաբերական երկիր դարձնել: Նախընտրական ծրագրում դաշինքը ներկայացրել է տնտեսական խնդիրների լուծման իր տեսլականը: Մասնավորապես՝ մի շարք ընկերությունների, արտադրող ձեռնարկությունների նախատեսվում է ազատել ԱԱՀ-ից, մաքսատուրքից և գույքահարկից: Դրանց թվում են արտադրական հոսքազճեր և օժանդակ սարքավորումներ ներմուծողները, էլեկտրոմոբիլներ ներկրողները և վաճառողները, այլընտրանքային էներգետիկայի, ինչպես նաև 150 եւ ավելի աշխատող ունեցող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների ընկերությունները: Բանակի զնումները հայաստանյան արտադրողներից կավելանան տարեկան պաշտպանական բյուջեի առնվազն 2 տոկոսի չափով: ՀՀ զինված ուժերի

զինտեխնիկայի անհրաժեշտ դետալների արտադրությունը կկազմակերպվի Հայաստանում:

«Ելք» դաշինքը որպես գործազրկության վերացման և բյուջեում ուղղակի հարկերի ավելացման միջոց է դիտարկում ծանր արդյունաբերությունը: Առաջնայնություն կտրվի գունավոր մետալուրգիային և քիմիական արդյունաբերությանը: Արտոնյալ պայմաններ կստեղծվեն Սյունիքի մարզում մետաղաձուլական գործարան ստեղծելու համար: Շահագրգիռ կողմերի ներգրավելով՝ ամենակարճ ժամկետում Կապանի երկաթգծի կայարանը կկապվի Իրանի Ջուլֆայի երկաթգծի կայարանին՝ նպաստելով հանքարդյունահանմանը: Էլեկտրաէներգիայի և գազի սակագները 10-15 տոկոսով կնվազեցվեն՝ վերականգնվող էներգետիկայի զարգացման և էներգակիրների ներկրման այլընտրանքային աղբյուրներից օգտվելու միջոցով:

Դաշինքը մտադիր է վերացնել արհեստական մենաշնորհները: Պետական գնումների թափանցիկությունը բարձրացվելու է եւ օրենսդրորեն սահմանափակվելու են մեկ անձից գնումներ կատարելու հիմքերը: Հայաստանի արտաքին պարտքը աուդիտի կենթարկվի, կուսումնասիրվի վարկերի ծախսման արդյունավետությունը՝ հնարավոր չարաշահումները՝ մեղավորներին բացահայտելու համար:

Երևանը բեռնաթափելու և տարածքային համաչափ զարգացում ապահովելու նպատակով դաշինքը առաջարկում է սահմանել ըստ գոտիների՝ հարկերի մի համակարգ, որը բիզնեսի համար գրավիչ կլինի:

«Ելք»-ը քաղաքական սխալ է համարում ՀՀ անդամակցությունը ԵԱՏՄ-ին, որը լրջագույն ռիսկեր է պարունակում նաեւ տնտեսական զարգացման համար: Այլ միջազգային եւ միջպետական կառույցներին միանալու որոշում ընդունելիս դաշինքն առաջնորդվելու է Հայաստանի գերակա շահերով:

Գյուղատնտեսության ոլորտում դաշինքը նախատեսում է, որ այն գյուղացիական տնտեսությունները, որոնք կանցնեն կաթիլային ոռոգման, հինգ տարի ժամկետով կազատվեն ոռոգման ջրի վարձից: Պետությունը կխրախուսի գյուղացիական ճյուղային ասոցիացիաների ստեղծումը, որոնք կզբաղվեն գյուղացիական համքարությունների շահերի պաշտպանությամբ և մեծածախ մատակարարումների կազմակերպմամբ: Կստեղծվեն բացառապես օրգանական մթերքի արտադրության փորձարարական կենտրոններ: Կսկսվի փոքր ջրամբարների ստեղծման գործընթացը: Կստեղծվի էլեկտրոնային հարթակ, որի միջոցով գյուղմթերքի արտադրողներն ու սպառողները հնարավորություն կունենան պայմանավորվել առքուվաճառքի մասին: Մինչև երկու տարվա գործարանային արտադրության գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծողները և վաճառողները երկու տարով կազատվեն մաքսատուրքից և ԱԱՀ-ից:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում տարեկան մինչև 500 միլիոն դրամ շրջանառություն ունեցող ընկերությունները կհարկվեն տարբերակված եռաստիճան շրջանառության հարկով: Ընդ որում՝ շրջանառության հարկով կամ ԱԱՀ-ով հարկման դաշտում աշխատելու ընտրության հնարավորություն կընձեռվի: Կներդրվի ՓՄՁ շահերի պաշտպանության՝ բիզնես օմբուդսմանի ինստիտուտ՝ լայն

լիազորություններով: Մաքսագերծման հսկիչ գները կվերացվեն և հիմքում կդրվեն հաշիվ-ապրանքագրերը և տվյալ ապրանքի գների մասին համացանցում առկա տեղեկատվությունը:

Տրանսպորտի ոլորտում նախնառաջ կներդրվի ազգային ավիափոխադրողի ինստիտուտը, որը կլինի պետական բաժնեմասով ավիաընկերություն և նրա բնականոն գործունեությունը կդիտարկվի որպես ազգային անվտանգության խնդիր: Կիրականացվեն ավիավառելիքի շուկայի ազատականացմանն ուղղված հակամենաշնորհային միջոցառումներ՝ ապահովելով ավիափոխադրման տոմսերի գների նվազեցում և դեպի Հայաստան տուրիստական հոսքի աճ:

Արագաչափերի և տեսանկարահանող սարքերի գործադրմամբ երթևեկության կանոնների խախտումների համար տուգանքներ նշանակելու պրակտիկան կդադարեցվի: Տարին առնվազն 10 միլիոն դոլար կներդրվի Երևանի մետրոպոլիտենի հետագա ճյուղավորման համար: Կկառուցվի Իրան-Հայաստան երկաթուղին՝ դիտարկելով նախագծի իրագործման փուլային տարբերակ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

«Ելք» դաշինքը իր նախընտրական ծրագրի «ՀՀ Զինված ուժեր» բաժնում կարևորել է զինձառայողների սոցիալական կեցության և առողջական խնդիրները՝ որպես լուծումներ առաջարկելով սպաների համար նախատեսված բնակարանաշինությունը հայտարարել որպես պետական առաջնահերթություն և առնվազն եռապատկել դրա տեմպերը, քննարկել վարձված բնակարանների համար սպաներին տրվող փոխհատուցման դրամագլուխը հիփոթեքային նպատակներով օգտագործելու հնարավորությունը: Առողջական խնդիրներ ձեռք բերած նախկին ժամկետային ծառայողները կապահովվեն անհրաժեշտ ծառայություններով:

Ուսումնասիրությունների արդյունքում դաշինքը նախատեսում է ստեղծել Հայաստանի բոլոր դպրոցների աշակերտների սոցիալական վիճակի քարտեզ, որի հիման վրա զգալի թվով անապահով աշակերտներին և առաջադիմության խնդիրներ ունեցող դպրոցներին կհատկացվեն լրացուցիչ միջոցներ: Կիրախուսվի նաև ուսուցիչների միասնական արհմիութենական շարժման ձևավորումը, որը կպաշտպանի ուսուցիչների շահերը: Ըստ դաշինքի ծրագրի՝ առաջիկա հինգ տարվա ընթացքում հանրակրթությանը հատկացվող բյուջետային միջոցները կկրկնապատկվեն, ինչը կհանգեցնի նաև ուսուցիչների աշխատավարձի բարձրացմանը:

Դաշինքը նախատեսում է ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության կենտրոն, որը կրթության բոլոր փուլերում կօգնի հաշմանդամություն ունեցողներին որակյալ և մատչելի կրթություն ստանալ՝ տրամադրելով մասնագիտական և տեխնիկական աջակցություն ուսանողներին ու դասախոսական կազմին: Կստեղծվի նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող գործակալություն: «Ելք»-ը կարևորել է նաև մանկատներից դուրս եկող երեխաների հետագա կյանքի կազմակերպման

խնդիրները և առաջարկում է ստեղծել սոցիալ-հոգեբանական աջակցություն ցուցաբերող մարմին:

Դաշինքը պետական բյուջեի եկամուտների մեծացման արդյունքում խոստանում է 20 տոկոսով ավելացնել բյուջետային հիմնարկների աշխատավարձերը և կենսաթոշակները: Կօպտիմալացվի նաև պետական կառավարման համակարգը և դրա շնորհիվ պետական հատվածի աշխատավարձերը կհասցվեն մասնավոր հատվածի մակարդակին՝ սահմանելով եկամտահարկի միասնական 20 տոկոս դրույքաչափ: «Ելք»-ը նախատեսում է նաև չեղարկել կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչը՝ փոխարենը՝ նախաձեռնելով կամավորության հենքի վրա ձեւավորվող կենսաթոշակային համակարգի ստեղծումը:

Առողջապահության ոլորտում «Ելք» դաշինքը առաջարկում է պետպատվերի համար նախատեսված գումարը տրամադրել ոչ թե հիվանդանոցներին, այլ (սերտիֆիկատի տեսքով) պետպատվերից օգտվելու իրավունք ունեցող հիվանդներին, ինչը հնարավորություն կտա նախընտրած բուժհաստատությունում բուժվել: Նախատեսվում է իրականացնել նաև ՀՀ բոլոր քաղաքացիների առողջության հետազոտություն՝ ստեղծելով համապատասխան տեղեկատվական բազա, ընդ որում՝ ռիսկային խմբերը պարբերաբար ենթարկելով պարտադիր հետազոտության: «Ելք»-ը խոստանում է հաջորդ 5 տարիների ընթացքում առողջապահությանը հատկացվող բյուջետային միջոցները կրկնապատկել:

Դաշինքը նախատեսում է երրորդ, չորրորդ երեխայի ծննդյան պետական միանվագ դրամական օգնության չափերի կրկնապատկում, իսկ հինգերորդ և վեցերորդ երեխայի ծննդյան դեպքում՝ եռապատկում:

«ԱԶԱՏ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախընտրական ծրագիրը կազմում է 43406 նիշ, ինչը համապատասխանում է 24 էջին:

Նախընտրական ծրագրի տնտեսական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 11716 նիշ, ինչը համապատասխանում է 6,5 էջին, որը կազմում է ընդհանուր ծրագրի ծավալի 27%-ը:

Նախընտրական ծրագրի սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 3625 նիշ, ինչը համապատասխանում է 2 էջին, որը կազմում է ընդհանուր ծրագրի ծավալի 8,34%-ը:

Այսպիսով, «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախընտրական ծրագրում տեղ գտած տնտեսական և սոցիալական խնդիրներին նվիրված բաժինները միասին կազմում են 35,34%:

Նախընտրական ծրագրում, բացի տնտեսական և սոցիալական խնդիրներին նվիրված մասերը, ներառված են նաև հետևյալ թեմատիկ բաժինները՝ «Ինքնիշխան, ժողովրդավար և արդիական Հայաստան», «Ազգային շահի վրա խարսխված տարբերակված (դիվերսիֆիկացված) արտաքին քաղաքականություն», «Հարևանների հետ արժանապատիվ խաղաղություն հաստատատել, այլ ոչ թե «մուրալ», «Ազատ, ժողովրդավար և ինտեգրված Արցախ», «Օրինականության և իրավունքի գերակայության հաստատում», «Պաշտպանություն և բանակի արդիականացում», «Առաջանցիկ գիտություն՝ հանուն անվտանգության և ինքնիշխանության», «Հայաստանն առաջ տանող ու արժանապատիվ ներկայացնող մշակույթ և արվեստ», «Որակյալ և մատչելի հանրակրթություն՝ որպես ազգային անվտանգության երաշխիք»:

«Ազատ դեմոկրատներ» կուսակցությունն իր նախընտրական ծրագրի նախաբանում արձանագրել է, որ երկրում ահագնացած է աղքատությունն ու գործազրկությունը, տնտեսական, քաղաքական ու սոցիալական հետընթացը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՈՐՏ

Այս ոլորտին վերաբերող բաժինը կուսակցությունը վերնագրել է «Մրցունակ տնտեսության քաղաքականության առաջնահերթություններ»: «Ազատ դեմոկրատները» Հայաստանի տնտեսության զարգացումը կապում է ԵՄ հետ ստորագրելիք նոր պայմանագրի հետ՝ առաջարկելով այն դարձնել ավելի համընդգրկուն՝ ներառելով ազատ առևտրի գոտու ստեղծման, վիզաների ազատականացման բաղադրիչները, ինչպես նաև Եվրոպական ընդհանուր ավիացիոն տարածքի համաձայնագրի ստորագրումը, եվրոպական էներգետիկ համայնքին անդամագրումը:

Առևտրատնտեսական, էներգետիկ և այլ բնագավառներում կուսակցությունն առաջարկում է ընդլայնել համագործակցությունը ԱՄՆ-ի հետ՝ ընդհուպ մինչև ռազմավարական գործընկերության խարտիայի ստորագրումը: Կարևորում է նաև Իրանի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքումը, մասնավորապես՝ գազի ներմուծման նոր պայմանագրի շուրջ բանակցելը՝ ռուսական գազի ներմուծումից կախվածությունը փոքրացնելու և մենաշնորհը վերացնելու նպատակով: «Ազատ դեմոկրատներն» առաջարկում է նաև Սփյուռքի տնօրինած կապիտալը (տարբեր հաշվարկներով՝ 440-450 մլրդ ԱՄՆ դոլար) ուղղորդել Հայաստանի տնտեսություն՝ սուվերեն ներդրումային հիմնադրամի միջոցով: Կուսակցությունը նախատեսում է Կառավարության տնտեսական քաղաքականության հիմքում դնել կարևորագույն ենթակառուցվածքային օբյեկտների շահագործումն ու զարգացումը: «Ազատ դեմոկրատները» նախատեսում է իրականացնել դիվերսիֆիկացված հարկային և խթանող բյուջետային քաղաքականություն, հարկային բեռի վերաբաշխում՝ էապես նվազեցնելով փոքր և միջին բիզնեսի բեռը, սահմանել շահութահարկի դիվերսիֆիկացված դրույքաչափեր՝ արտադրության ոլորտի ձեռնարկությունների համար, իջեցնել գործարարության տուրքերը: Ըստ կուսակցության՝ պետության հարկային արտոնությունների եւ սուբսիդավորման քաղաքականությունը նախնառաջ պետք է ուղղված լինի (SS ոլորտից բացի) դեղագործության, ինտվացիոն և բարձր տեխնոլոգիական արտադրանքների,

ռազմական տեխնիկայի, ոչ ավանդական էներգետիկայի բազային տարրերի, գյուղմթերքների ու սննդարդյունաբերության ապրանքների արտադրությանն ու արտահանմանը:

«Ազատ դեմոկրատներն» առաջարկում է նաև 2017-2021թթ. Հայաստանում ու Արցախում հիմնել առնվազն 2 տասնյակ ինովացիոն կենտրոններ, տեխնոպարկեր և լաբորատորիաներ, մարզերում բացել գործարարության աջակցության կենտրոններ:

Գյուղատնտեսական ոլորտի առաջընթացի համար կուսակցությունն առաջարկում է օրենսդրորեն սահմանել, թե ինչ են գյուղացիական, ֆերմերային տնտեսություններն ու գյուղատնտեսական ձեռնարկությունները՝ տարբերակելով դրանք եւ հնարավորություն տալով օգտվել առաջարկվող դիվերսիֆիկացված ու խթանիչ քաղաքականություններից: Ազատ դեմոկրատներն անհրաժեշտ են համարում սուբսիդավորել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, լեռնային գյուղական բնակավայրերում դա զուգակցել մթերման երաշխավորված գների քաղաքականության հետ, խրախուսել փոքր գյուղացիական տնտեսությունների զարգացումը, պայքարել խոշոր հողատիրության դեմ, գյուղմթերքների իրացման ու գյուղատնտեսական աշխատանքների ֆինանսավորման ոլորտներում ստեղծել փոխօգնության կոոպերատիվներ, բարեփոխել ոռոգման համակարգը:

«Ազատ դեմոկրատների» բնորոշմամբ՝ կոռուպցիայի համակարգային բնույթն ու ստվերային տնտեսության ահռելի չափերը, քաղաքական ու տնտեսական մենաշնորհներն այլևս վտանգում են պետականության հիմքերն ու փակում են երկրի զարգացման հեռանկարները: Որպես ելք՝ առաջարկվում է ներդնել կառավարման արդյունավետ, թափանցիկ և հաշվետու համակարգեր: Տնտեսության մեջ նախատեսվում է վերացնել ստվերը՝ բյուջետային եկամուտները ավելացնելով 600 միլիոնից մինչև 1 մլրդ ԱՄՆ դոլարով, ինչը նշանակում է, որ բյուջետային ծախսերը բնակչության մեկ շնչի հաշվով կարող են ավելանալ 200-300 ԱՄՆ դոլարով կամ միջին ընտանիքի հաշվով՝ 800-1200 ԱՄՆ դոլարով: Կոռուպցիայի ու ստվերի դեմ արդյունավետ պայքարի և դրա հաշվին լրացուցիչ միջոցների պետական բյուջե մուտքագրման դեպքում հնարավոր կլինի առնվազն կրկնապատկել պաշտպանության, առողջապահության ոլորտների ծախսերը: Ազատ դեմոկրատներն անհրաժեշտ են համարում վերանայել և առավելագույնս վերահսկելի դարձնել պաշտպանության ոլորտում գնումների գործընթացը՝ բացառելով կոռուպցիոն գործարքները, յուրացումները եւ չարաշահումները:

Ընտրությունների արդյունքում վստահության համապատասխան քվե ստանալու պարագայում կուսակցությունը խոստանում է վերացնել մենաշնորհները և օլիգոպոլիաները՝ պետական իշխանությունը տարանջատելով բիզնեսից, դադարեցնելով պետական խտրական և հովանավորչական քաղաքականությունը, վերադարձնելով օրենքի խախտումներով ձեռքբերված գույքը, խստացնելով տնտեսական մրցակցության մասին օրենսդրությունը: Ազատ դեմոկրատները նախատեսում են նաև գույքագրել և քվոտավորել ընդերքի օգտագործումը, միջազգային և եվրոպական կառույցների հետ համագործակցելով՝ ներդնել ջրային,

հանքային և բնական այլ ռեսուրսների օգտագործման արդյունավետ, խնայողական ու թափանցիկ համակարգեր:

Ըստ կուսակցության՝ Հայաստան-Ռուսաստան գազային պայմանագրի դրույթներն անհրաժեշտ է համալրել այնպիսի կարգավորումներով, որոնք «Գազարմի» համար պարտադիր կդարձնեն իրենց պատկանող գազատարով իրանական գազի տեղափոխությունը և տարանցումը:

Կուսակցությունը համոզված է, որ Հայաստանի համար խոչընդոտներ է հարուցում Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) անդամակցությունը՝ իր անորոշ հեռանկարներով: Ազատ դեմոկրատներն առաջարկում են դադարեցնել Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին՝ համարելով, որ այն ոչ միայն տնտեսական զարգացման ու անվտանգության ամրապնդման խոստացված արդյունքների չի բերել ու չի կարող բերել, այլև վատթարացրել է երկրի ցուցանիշները բոլոր բնագավառներում, այդ թվում՝ մեծ անկում է ապրել ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը: 2014-ի համեմատ 2016թ. ներմուծումը պակասել է 28%-ով: Արտահանումը նույն ժամանակաշրջանում աճել է 16 տոկոսով, որը, սակայն, ոչ թե արդյունք է Հայաստանի առևտրային դիրքերի ուժեղացման և հայկական արտադրության զարգացման, այլ Թուրքիայից դեպի Հայաստան ներմուծվող ապրանքների պարզ վերաարտահանման: Կուսակցությունը համոզված է, որ արտահանման ծավալներից «թուրքական մասը» հանելու դեպքում, կարելի է պնդել, որ այն նույնպես անկում է ապրել: Փոխարենը աճել է Հայաստանի պետական պարտքը. եթե երկու տարի առաջ այն 4,4 միլիարդ ԱՄՆ դոլար էր, ապա այժմ ավելացել է 26%-ով՝ հասնելով 5,6 միլիարդ ԱՄՆ դոլարի:

Ազատ դեմոկրատները համոզված են, որ եվրոպական ինտեգրումը Հայաստանի համար պետք է դառնա գերակայություն, իսկ Եվրոպական միությունը անդամակցությունը՝ ռազմավարական տեսլական է և կենսական անհրաժեշտություն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՈՐՏ

«Ազատ դեմոկրատներ» կուսակցության սոցիալական քաղաքականության կարգախոսն է՝ «Ապահով մարդ և ընտանիք, հեռանկարով երիտասարդություն և սոցիալապես համերաշխ Հայաստան»: Այդ քաղաքականությունն, ըստ «Ազատ դեմոկրատների», պետք է լինի մարդակենտրոն և մարդու համար, արտացոլի քաղաքացու եւ հանրության շահերը, ինչի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել սոցիալական համերաշխությունը, էապես կրճատել աղքատությունն ու բացառել հարստության գերկենտրոնացումը:

Կուսակցությունը նախատեսում է 2017-2021թվականներին գործազրկության մակարդակը 2016թ. 16.9%-ից 2021թ. իջեցնել 10.4%-ի, ինչը հավասար է 140.000 աշխատատեղ ստեղծելուն: Իշխանությունը ստանձնելու դեպքում ազատ դեմոկրատները խոստանում են նվազագույն աշխատավարձը 5 տարում կրկնապատկել՝ մինչև 111.000 դրամ, միջին աշխատավարձը հասցնել 259.000 դրամի, իսկ միջին աշխատանքային կենսաթոշակները՝ առնվազն մինչև 73.000 դրամի:

Ընդհանուր աղքատության ցուցանիշը ներկայիս ավելի քան 30%-ից 2017-2021թթ. ընթացքում կիջեցվի առնվազն մինչև 15%, իսկ ծայրահեղ աղքատների թիվը կկազմի ոչ ավելի, քան 2%:

«Ազատ դեմոկրատներ»-ն առաջարկում է երկրում ներդնել սոցիալական համերաշխության մոդել, որը ենթադրում է բնակչության ազատ տեղաշարժի հնարավորություն սոցիալական մի խմբից մյուսը, եկամուտների տարբեր տեսակների միջև նորմատիվային կապի պահպանում, ինքնազբաղվածության աճ, սերունդների միջև համերաշխություն, տարբեր մասնագիտությունների հավասար գնահատում և տարածքային համաչափ զարգացում: Ըստ կուսակցության՝ աշխատանքից ազատելու դեպքում գործատուի կողմից վճարվող նպաստի տևողությունը պետք է սահմանվի առնվազն 3 ամիս, իսկ որոշ աշխատանքների համար՝ 6 ամիս:

«Ազատ դեմոկրատների» ծրագրում նախատեսվում է, որ երեխաների ծնունդի միանվագ նպաստը պետք է սահմանել 1,5 միլիոն դրամ, երրորդ և չորրորդ երեխաների համար՝ 2 միլիոն, իսկ հինգերորդից սկսած՝ 3 միլիոն դրամ: Զգալիորեն՝ 30-50%-ով պետք է ավելացնել մայրերի վճարվող արձակուրդի տևողությունը եւ նման արձակուրդի հնարավորություն ընձեռել նաեւ հայրերին:

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում կենսագործունեության բոլոր բնագավառներում երիտասարդությանն ապահովել սեփական երկրում որակյալ կրթություն ստանալու, ընտանիք կազմելու, աշխատանքի, ինքնաիրացման ու ստեղծագործական ներուժի դրսևորման գործնական հնարավորություններով: Ազատ դեմոկրատները նախատեսում են մարդու համար ապահովել առողջ սոցիալական միջավայր՝ խստացնելով բնապահպանական օրենսդրությունը, քաղաքացիական ու պետական վերահսկողական մեխանիզմները, ինչպես նաև պատշաճ պայմաններ ու հնարավորություններ ստեղծել դպրոցականների, երիտասարդության եւ ընդհանրապես ամբողջ հասարակության առողջ ապրելակերպի, անվտանգ սննդի, մարզական ու սպորտային կյանքի, լիարժեք ինտեգրման ու ինքնաիրացման համար:

Կուսակցությունը ստվերի կրճատման հաշվին առաջարկում է կրկնապատկել պաշտպանության ոլորտի ծախսերը, այդ թվում՝ զինվորականության և արցախյան ազատամարտի մասնակիցների համար ընդլայնել սոցիալական արտոնություններն ու կենսական հանրային ծառայությունների մատչելիությունը: Միեւնույն ժամանակ առաջարկվում է «Ավագ դպրոցների ռազմավարության մասին» ՀՀ կառավարության որոշմամբ ուսուցիչների համար սահմանած աշխատավարձերի 20% հավելավճար: «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունն իր ծրագրում վստահություն է հայտնել, որ Հայաստանի տեղը համաեվրոպական ընտանիքն է, եւ պետք է կառուցել այնպիսի պետություն, որտեղ մարդու կյանքը, աշխատանքը և ծերությունը արժանապատիվ ու բարեկեցիկ է:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Հայկական վերածնունդ» կուսակցությունը նախընտրական իր ծրագրով առաջարկում է 30 քայլերը, որոնք կփոխեն Հայաստանը: Փաստաթղթի ընդհանուր ծավալը կազմում է 10664 նիշ, ինչը համապատասխանում է մոտ 6 էջին:

Նախընտրական ծրագրի տնտեսական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 4203 նիշ, ինչը համապատասխանում է 2,3 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 39,41 տոկոսն է:

Սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 2903 նիշ, ինչը համապատասխանում է 1,6 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 27,22 տոկոսն է:

Այսպիսով, նախընտրական ծրագրում տնտեսական և սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են ծրագրի ընդհանուր ծավալի 66,63 տոկոսը:

Տնտեսական և սոցիալական հարցերից զատ «Հայկական վերածնունդ» կուսակցության ծրագրում տեղ են գտել հետևյալ թեմաները՝ կոռուպցիայի դեմ պայքար, օրենքի գերակայություն, անցում պրոֆեսիոնալ և վարձատրվող բանակի, պրոբացիոն ծառայության ներդրում, գիտության և կրթության ֆինանսավորման ավելացում, մշակույթի և սպորտի պետական աջակցության մեծացում, Հայաստան-Սփյուռք-Արցախ եռամիասնության ամրապնդում, ազգային փոքրամասնությունների ինքնության և քաղաքական մասնակցության ապահովում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՈՐՏ

Տնտեսության զարգացման փոփոխման համար կուսակցությունն առաջարկում է մասնակցություն տարածաշրջանային խոշոր ծրագրերին և պետության կողմից գործուն քայլերի ձեռնարկում՝ միջազգային ֆինանսական կառույցներից և շահագրգիռ պետություններից ֆինանսական միջոցների ներգրավում՝ Իրան-Հայաստան-Վրաստան նավթամուղի, Իրան-Հայաստան-Վրաստան գազամուղի, Հայաստան-Իրան ջրատարի, Իրան-Հայաստան երկաթգծի՝ Հայաստանում ժամանակակից նավթագործարանի կառուցման նպատակով:

«Հայկական վերածնունդ» կարևորում է ներգետիկ հզորությունների հետևողական զարգացումն ու դիվերսիֆիկացիան՝ Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան էներգետիկ համակարգի զարգացման օրինակով: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում նոր ատոմային էներգաբլոկի, աղբավերամշակման գործարանների կառուցումը, այլընտրանքային էներգիայի աղբյուրների կիրառման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես նաև շուկայում սարքավորումներ արտադրող և մատակարարող քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Իր նախընտրական դրույթներում ՀՎԿ-ն առաջարկում է ստեղծել կամ վերագործարկել 20 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաների և ռազմական արդյունաբերության

ուլորտը՝ սահմանելով հարկային և մաքսային արտոնությունների քաղաքակիրթ մեխանիզմներ, արդիականացնել պետական սահմանների հսկողությունը նաև հայրենական արտադրության սարքավորումներով, կասեցնել «Նաիրիտի» և «Վանաձորի քիմպրոմի» սնանկացման գործընթացը, մշակել դրանց վերագործարկման ռազմավարական ծրագիր և միջազգային ներդրումային մրցույթ հայտարարել:

ՀՎԿ-ն շեշտում է փոքր և միջին ձեռներեցության հետևողական զարգացման, ցածր տոկոսադրույքներով արտադրական և գյուղատնտեսական վարկերի տրամադրման անհրաժեշտությունը: Սահմանամերձ տարածաշրջաններում, աղետի գոտում նախատեսվում է այս ձեռնարկությունների հարկային արտոնությունների սահմանում և տրամադրում, մինչև 18 միլիոն դրամ տարեկան ապրանքաշրջանառություն ունեցող ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին՝ 3 տարով հարկերից ազատում:

ՀՎԿ-ն առաջարկում է նաև հարկային և մաքսային վարչարարության շարունակական պարզեցում, էլեկտրոնային համակարգի ամբողջական ներդրում, հսկիչ գների վերացում, պետական պարտքի շեմի բարձրացումը սահմանափակող օրենքի ընդունում, վարկային միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողության ուժեղացում:

1988թ. երկրաշարժից տուժած բնակավայրերում, ինչպես նաև սահմանամերձ գոտում ՀՎԿ-ն նախատեսում է հարկային արտոնությունների տրամադրում, նոր ստեղծվող արտադրական ձեռնարկություններին՝ մինչև 3 տարի ժամկետով հարկերից ազատում:

ՀՎԿ-ն համոզմունք է հայտնում, որ պետք է ուժեղացվի ընդերքի և բնական ռեսուրսների նկատմամբ պետական վերահսկողությունը, մասնավորապես՝ սահմանափակելով օֆշորում գրանցված ընկերությունների մասնակցությունը հանքարդյունաբերության ոլորտի ծրագրերին: Սրա հետ կապված առաջարկում է նաև ընդերքը շահագործողներից գանձվող 1 տոննա հանքանյութի համար սահմանված 600 դրամ պետական վճարը բարձրացնել՝ պետական բյուջեի համալրման նպատակով:

Կուսակցությունը շեշտում է գյուղատնտեսության ապահովագրման քաղաքակիրթ համակարգ ներդնելու անհրաժեշտությունը՝ աղետների դեպքում գյուղացուն երաշխավորված ֆինանսական օգնություն տրամադրելու նպատակով, կարևորվում է նաև գյուղմթերող ձեռնարկություններին պետական աջակցություն և գյուղատնտեսական ոլորտում ընտանեկան բիզնեսի զարգացման համակարգի ներդրումն ու կոոպերատիվների զարգացումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

«Հայկական վերածնունդի» նախընտրական ծրագրի սոցիալական ոլորտին վերաբերող դրույթներում առաջնայիններից են ավանդների ամբողջական

վերադարձը՝ ներառյալ ավանդատուների ժառանգներին ավանդների փոխհատուցումը, ինչպես նաև կենսաթոշակային կուտակային համակարգի բարեփոխումը՝ կիրառելով կամավորության սկզբունքը:

Հիփոթեքային վարկավորման միջոցով բնակարանների ձեռք բերման առումով ՀՎԿ-ն առաջարկում է վերացնել կանխավճարը՝ ապահովելով առնվազն 20-30 տարվա վարկավորման մեխանիզմներ՝ երիտասարդ ընտանիքների համար ցածր տոկոսադրույքի կիրառմամբ և պետության միջոցներով սուբսիդավորմամբ, իսկ սոցիալապես անապահով խավերի համար՝ պետական և նպատակային ծրագրերի միջոցով բնակարանային շինարարության երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի մշակում ու իրականացում:

Առողջապահության ապահովագրության ոլորտում կուսակցությունը նախատեսում է բազմաթիվ չարաշահումների և կոռուպցիոն ռիսկերի պատճառ դարձած պետպատվերի համակարգի փոխարինում՝ հասցեական գումարային սերտիֆիկատներով և բոլոր կարիքավոր քաղաքացիներին դրանց տրամադրումով: Երկրում տարածված հիվանդությունների և վիրահատությունների առնչությամբ էլ առաջարկվում է երաշխավորված պետական աջակցության մեխանիզմների ներդրում, բուժաշխատողների աշխատավարձերի շարունակական բարձրացում և ինդեքսավորում:

Ըստ ՀՎԿ ծրագրի՝ յուրաքանչյուր ամուսնացող զույգին պետական բյուջեից պետք է միանվագ տրամադրել 500.000 դրամ աջակցություն՝ նախապատվություն տալով սոցիալապես անապահովներին, ինչպես նաև նախատեսվում է նորածին երեխաներին հատկացվող գումարների մեծացում, բազմազավակ ընտանիքներին պետական աջակցության մեխանիզմների ստեղծում:

Կուսակցությունը նախատեսում է ավելի քան 200.000 հաշմանդամների թոշակների բարձրացում և ինդեքսավորում, հարկային արտոնությունների տրամադրում՝ հաշմանդամների կողմից ստեղծված ձեռնարկություններին կամ հաշմանդամ աշխատակիցներ ունեցող ընկերություններին, ինչպես նաև կառավարությանն առընթեր պետական մարմնի ստեղծում, որը կգրադվի հաշմանդամների խնդիրներով:

ՀՎԿ-ն անհրաժեշտ է համարում նվազագույն աշխատավարձի ամենամյա բարձրացում և ինդեքսավորում՝ այն առաջիկա տարիներին հասցնելով 100.000 դրամի, իսկ կենսաթոշակները պետք է հասնեն նվազագույն սպառողական զամբյուղի մակարդակին:

Կուսակցությունն առաջարկվում է նաև նվազեցնել կոմունալ ծառայությունների սակագները, ազատականացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների շուկան, արմատապես բարեփոխել համատիրությունների համակարգը, վերացնել գազի սպասարկման վճարը:

ՀՎԿ-ն կարելուք է արագաչափերի և «կարմիր գծերի» արատավոր համակարգի վերացումը և որպես երթևեկության անվտանգության նպատակով գանձվող գումարների առավելագույն չափ՝ 1000 դրամի սահմանումը:

Կուսակցությունը նախատեսում է ՀՀ մարզերում անվճար մանկապարտեզների ցանցի ձևավորում, սոցիալապես անապահով ընտանիքների համար անվճար

կրթության երաշխավորման մեխանիզմների սահմանում, պետպատվերի փոխարեն այդ անձանց գումարային կրթական սերտիֆիկատների տրամադրում:

Նախընտրական դրույթներում ՀՎԿ-ն անդրադարձել է նաև սիրիահայերի, Ադրբեջանից բռնագաղթածների, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց հասարակության մեջ լիարժեք ինտեգրման խնդրին՝ առաջարկելով դրա համար քաղաքակիրթ մեխանիզմների ստեղծում:

«ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ

Որպես նախընտրական ծրագիր ներկայացված «Ծառուկյան» դաշինքի 15 առաջնահերթ քայլերը՝ կոչվող փաստաթղթի ծավալը կազմում է 2370 նիշ, ինչը համապատասխանում է 1,3 էջին:

Այդ փաստաթղթի տնտեսական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 883 նիշ, ինչը համապատասխանում է 0,5 էջին, որն ընդհանուր ծավալի 37,26 տոկոսն է:

Սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 1487 նիշ, ինչը համապատասխանում է 0,8 էջին, որը փաստաթղթի ընդհանուր ծավալի 62,74 տոկոսն է:

Այսպիսով, նախընտրական փաստաթուղթն ամբողջությամբ՝ 100 տոկոսով նվիրված է տնտեսական և սոցիալական խնդիրներին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՈՐՏ

«Ծառուկյան» դաշինքի 15 առաջնահերթ քայլերից 7-ը վերաբերում են տնտեսական խնդիրների լուծմանը: Այսպես, նախատեսվում է առաջիկա երեք տարիներին փոքր և միջին ձեռնարկություններն ազատել հարկերից, իսկ առաջիկա հինգ տարիներին մինչև 30 միլիոն դրամ շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտներին ազատել հարկերից, այդ թվում՝ պետական ռեզիստրում որպես ԱԶ կամ իրավաբանական անձ գրանցվելու պարտավորությունից: Հարկային պարտավորությունների չկատարման հետևանքով կուտակված շուրջ 60 միլիարդ դրամ տույժերի և տուգանքների մասով դաշինքն առաջարկում է կիրառել հարկային համաներում:

Գյուղատնտեսական ոլորտը բարելավելու համար, ըստ դաշինքի, անհրաժեշտ է, որ պետությունը վարկավորի և խրախուսի գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող անհատներին և ընկերություններին: Գյուղատնտեսական վարկերի տոկոսը չպետք է գերազանցի 3-5 %-ի շեմը: Գյուղացիական տնտեսությունների համար 1 հեկտար հողամասի ռոտզման համար տարեկան վճարը նախատեսվում է սահմանել 1000 դրամ:

Մաքսային ոլորտում «Ծառուկյան» դաշինքն առաջարկում է վերացնել «հսկիչների» կիրառումը, իսկ հանքարդյունաբերությունում՝ վերանայել բնօգտագործման վճարների հաշվարկման և վճարման մեխանիզմը՝ հօգուտ պետական բյուջեի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

«Ծառուկյան» դաշինքի առաջնահերթ քայլերից 8-ը վերաբերում են սոցիալական խնդիրների լուծմանը: Մասնավորապես՝ նախատեսվում է միջին կենսաթոշակի չափը համապատասխանեցնել նվազագույն կենսաապահովման զամբյուղին, այն բարձրացնել 25 հազար դրամով և պարբերաբար ինդեքսավորել, իսկ 2018 թվականի հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձի չափը սահմանել 80 հազար դրամ:

Դաշինքն անհրաժեշտ է համարում սառեցնել հանրային դժգոհություններով ընդունված կուտակային կենսաթոշակային համակարգի գործունեությունը և դրան ուղղված պետական բյուջեի տարեկան 28-30 մլրդ ՀՀ դրամի հասնող գումարներով բարձրացնել կենսաթոշակները, իսկ քաղաքացիների ներդրած գումարները վերադարձնել:

Ըստ դաշինքի՝ գազի և էլեկտրաէներգիայի գործող սակագները պետք է էապես իջեցնել: Հիմնավորումները հետեյալն են՝ սահմանին 1000 մ3 գազը Հայաստանը ստանում է 150 ԱՄՆ դոլարով, իսկ վերջնական սպառողին, այդ թվում՝ բնակչությանը, այն հասնում է առնվազն երկու անգամ բարձր գնով: Ինչ վերաբերում է էլեկտրաէներգիային, ապա ՀԷԿ-երի արտադրած 1 կվտ/ժամի միջին ինքնարժեքը կազմում է 2-5 դրամ, իսկ Մեծամորի ատոմակայանինը՝ 5-7 դրամ:

Անդրադառնալով առողջապահական ոլորտին, դաշինքն առաջարկում է արմատապես փոխել պետական պատվերի համակարգը. սոցիալապես անապահով խավերին, զինձառայողներին և օրենքով սահմանված այլ շահառուներին տրամադրել իրենց հասանելիք սերտիֆիկատը եւ պետպատվերի համակարգը ամբողջությամբ սերտիֆիկացնել:

Նախընտրական փաստաթղթում նշվում է, որ «բարձր առաջադիմությամբ ոչ մի ուսանող ուսման վարձը չվճարելու պատճառով չպետք է զրկվի կրթություն ստանալու իրավունքից»:

«Ծառուկյան» դաշինքը նաեւ խոստացել է, որ իր կողմից ձևավորվող նոր կառավարության առաջին որոշումը լինելու է արագաչափերի և «կարմիր գծերի» վերացումը:

«ԿՈՆԳՐԵՍ-ՀԺԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ

Կոնգրես-ՀԺԿ դաշինքի ընտրական ծրագիրը կազմում է 13879 նիշ, ինչը համապատասխանում է 7,7 էջին:

Ընտրական ծրագրի տնտեսական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 2571 նիշ, ինչը համապատասխանում է 1,4 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 18,52 տոկոսն է:

Սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 1094 նիշ, ինչը համապատասխանում է 0,6 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 7,88 տոկոսն է:

Այսպիսով, նախընտրական ծրագրում տնտեսական և սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են ծրագրի ընդհանուր ծավալի 26,40 տոկոսը:

Բացի տնտեսական և սոցիալական հարցերից, Կոնգրես-ՀԺԿ դաշինքի ընտրական ծրագրում տեղ են գտել հետևյալ թեմատիկ բաժինները. «Խաղաղություն, հաշտություն, բարիդրացիություն», «Պետությունը՝ զարգացման գործիք», «Պետություն բոլորիս համար», «Շնորհապետություն», «Անվտանգություն եւ արտաքին քաղաքականություն», «Գիտություն, կրթություն, տեխնոլոգիաներ, մշակույթ», «Ազատություն և ժողովրդավարություն»:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՈՐՏ

«Կոնգրես-ՀԺԿ» դաշինքն իր ընտրական ծրագրի տնտեսական խնդիրներին վերաբերող բաժինը սկսել է հետևյալ կետից. «Կիրառել կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 20-րդ հոդվածը հետադարձ ուժով՝ սկսած 1991 թվականից, եւ պետքույզե վերադարձնել ապօրինի հարստացմամբ ձեռք բերված միջոցները»:

Ազատ եւ հավասար մրցակցություն հաստատելու, մենաշնորհների և օլիգոպոլիաների դեմ արդյունավետորեն պայքարելու նպատակով դաշինքն առաջարկում է ընկերությունների համար սահմանել շուկայում ունեցած մասնաբաժնի առավելագույն 33 տոկոսի շեմ՝ նշելով, որ սահմանափակումը պարտադիր կգործի լայն սպառման ապրանքների շուկաների համար, իսկ այլ շուկաների վրա կտարածվի օրենքով:

Դաշինքը նախատեսում է հարկային եւ մաքսային քաղաքականության հիմքում դնել ներդրումների գրավչության բարձրացման, գործարարության խրախուսման եւ հարկային բազայի ընդլայնման գաղափարախոսությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է համարվում լիովին պարզեցնել հարկային եւ մաքսային համակարգը, հարկատեսակների թիվը 15-ից իջեցնել 6-ի (շահութահարկ, եկամտահարկ, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ, տեղական հարկ, ինչպես նաեւ մաքսատուրք): Ընդ որում՝ նախատեսվում է շրջանառության հարկը կիրառել միայն որպես փոխարինող հարկ, իսկ շահութահարկի, եկամտահարկի եւ ավելացված

արժեքի հարկերի դրույքաչափերը սահմանել 15 տոկոս, ինչպես նաև վերացնել ավելացված արժեքի հարկի գանձումը սահմանային գոտում:

Դաշինքն առաջարկում է նաև ներմուծվող ապրանքների մաքսատուրքը հաշվարկել բացառապես հաշիվ-ապրանքագրում (ինվոյտում) նշված գնի հիման վրա, իսկ այդ փաստաթղթի կեղծ լինելն ապացուցելը բացառապես պետության բեռն է: Ներդրումների խրախուսման նպատակով դաշինքն անհրաժեշտ է համարում 1-5 միլիոն ԱՄՆ դոլարի հասնող ներդրում կատարած ընկերություններին 2 տարով, իսկ 5 միլիոնից ավելի՝ 5 տարով ազատել շահութահարկից: Ընդ որում՝ այդ մոտեցումը կիրառել նաև վերաներդրվող շահույթի պարագայում, իսկ ինովացիոն բիզնեսը ազատել շահութահարկից առաջին 2 տարիների ընթացքում՝ հետագա 5 տարիներին այդ գումարները բյուջե մուծելու պայմանով:

Դաշինքը հանդես է գալիս գազի ու էլեկտրաէներգիայի սակագները 25 տոկոսով նվազեցնելու առաջարկով՝ սակագնի հաստատման մեթոդաբանության փոփոխության եւ կորուստների ու անարդյունավետ ծախսերի կրճատման միջոցով: Նախատեսվում է նաև էականորեն կրճատել Հայաստանի էներգետիկայի կախվածությունը գազից ու այլ ածխաջրածնային վառելիքից, խրախուսելով այլընտրանքային էներգետիկայի զարգացումը, մասնավորապես՝ երաշխավորելով արեւային էներգիան էլեկտրականի փոխակերպող պանելների արտադրության եւ սպառողների կողմից դրանց ձեռքբերման վարկավորումը:

Անդրադառնալով դրամավարկային քաղաքականությանը, «Կոնգրես-ՀԺԿ»-ն նշում է, որ այն պետք է բացառի դրամի արհեստական արժեւորումը եւ ուղղված լինի արտահանման խրախուսմանը: Ծանր վիճակում հայտնված գյուղացիական տնտեսությունների համար դաշինքն առաջարկում է կիրառել վարկային համաներում, զրոյացնել գյուղացիական վարկերի տույժ-տուգանքները, կատարել գյուղացիական տնտեսությունների վարկային պարտքերի դուրսգրում կամ մասնակի մարում: Բացի դա, անհրաժեշտ է համարվում պետական աջակցությամբ ստեղծել ապահովագրական համակարգ, որը գյուղատնտեսությունը կպաշտպանի ցրտահարություններից, կարկտահարություններից եւ այլ բնական աղետներից:

Դաշինքն իր ընտրական ծրագրում նախատեսում է ուսումնասիրել 2006-2012 թվականներին «Նաիրիտ» գործարանի բաժնեմասերի վաճառքի գործարքների օրինականությունը, վերականգնել դրանց արդյունքում գործարանին և պետությանը հասցված վնասը, պատասխանատվության ենթարկել յուրացումների և չարաշահումների համար մեղավորներին, մշակել «Նաիրիտի» վերագործարկման նոր ծրագիր:

«Կոնգրես-ՀԺԿ»-ն կարելորդ է նաև տարեկան ՀՆԱ-ի առնվազն 2 տոկոսի չափով զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման համար կապիտալ ներդրումներ կատարելը:

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Այս ոլորտին վերաբերող դրույթներում «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքը նախատեսում է մեկ տարվա ընթացքում միջին կենսաթոշակը բարձրացնել նվազագույն սպառողական զամբյուղի մակարդակի (55000 դրամ), 3 տարվա մեջ այդ մակարդակի բարձրացնել նվազագույն թոշակը, իսկ 5 տարվա ընթացքում կենսաթոշակների միջին չափը հասցնել միջին աշխատավարձի 40 տոկոսին:

Դաշինքն անհրաժեշտ է համարում պետական բյուջեից առողջապահության ֆինանսավորումը հասցնել ՀՆԱ առնվազն 3 տոկոսի, ներդնել պարտադիր համընդհանուր բժշկական ապահովագրության համակարգ:

«Կոնգրես-ՀԺԿ»-ն առաջարկում է ՀՀ Զինված ուժերում զգալիորեն բարձրացնել պայմանագրային զինծառայողների, սպաների եւ ենթասպաների աշխատավարձերը եւ «15 օր ծառայություն, 15 օր հանգիստ» գործող կարգի փոխարեն կիրառել «7 օր ծառայություն, 7 օր հանգիստ» կարգը:

Անդրադառնալով ԽՍՀՄ քաղաքացիների բանկային ավանդներին, դաշինքն առաջարկում է հետեւյալ լուծումը. ձևակերպել դրանք որպես պետական պարտատոմս և մարել 2 անգամ ավելի մեծ չափով և 2 անգամ ավելի արագ, քան նախատեսված է գործող օրենսդրությամբ:

Դաշինքն իր ծրագրային դրույթներում նախատեսում է նաև վերացնել պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը եւ առնվազն երկու անգամ նվազեցնել երթուկության կանոնների խախտման համար գանձվող տուգանքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հանրապետական կուսակցության նախընտրական ծրագիրը կազմում է 58996 նիշ, ինչը համապատասխանում է 32,8 էջին:

Նախընտրական ծրագրի տնտեսական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 14825 նիշ, ինչը համապատասխանում է 8,2 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 25,13 տոկոսն է:

Նախընտրական ծրագրի սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 9362 նիշ, ինչը համապատասխանում է 5,2 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 15,87 տոկոսն է:

Այսպիսով, նախընտրական ծրագրում տնտեսական և սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են ծրագրի ընդհանուր ծավալի 41 տոկոսը:

Բացի տնտեսական և սոցիալական հարցերից, Հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրում տեղ են գտել հետեւյալ թեմատիկ բաժինները. «Հայոց

բանակ», «Արցախի Հանրապետություն», «Արտաքին քաղաքականություն», «Միջուռք», «Սահմանադրական փոփոխությունների կենսագործում», «Պետական կառավարման համակարգ», «Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում», «Արդարադատություն, կոռուպցիայի դեմ պայքար», «Կրթություն և գիտություն», «Մշակույթ», «Բնապահպանություն», «Երիտասարդություն և սպորտ»:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՈՐՏ

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը իր նախընտրական ծրագրի մեկ քառորդից ավել տեղ է հատկացրել Հայաստանի տնտեսությանը՝ այն վերնագրելով «Տնտեսության առաջընթաց»: Հանրապետականը խոստանում է շարունակական և բոլորի համար շոշափելի բարեփոխումներ տնտեսության մեջ, հարկային և մաքսային ոլորտներում: Տնտեսական քաղաքականության օրակարգի առաջին հորիզոնականում են մակրոտնտեսական կայունության ապահովումը, ներդրումային միջավայրի բարելավումն ու նոր ներդրումների ներգրավումը, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտներին օժանդակության և տնտեսական խթանների տրամադրումը: Բոլոր այս դեպքերում ՀՀԿ-ն շեշտում է տնտեսական կյանքում հավասար մրցակցային պայմանների ապահովման և հովանավորչության վերացման մասին:

Չնայած գործարար միջավայրը գնահատող միջազգային կազմակերպությունների արձանագրած առաջընթացին, Հանրապետականն իր նախընտրական ծրագրում նշում է հետևյալ խնդիրները. առկա է վարչարարություն իրականացնող մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների անհավասար կիրառում, ցածր է դատական համակարգի արդյունավետությունը՝ վարչական կամ տնտեսական վեճերի դեպքում, ինչպես նաև մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության հարցերում, ՀՆԱ-ում փոքր և միջին բիզնեսի մասնակցությունը ցածր է, բարձր են բիզնես ծրագրերի անընդհատության ռիսկերը: Որպես լուծումներ առաջարկվում է բիզնեսի համար ռիսկեր պարունակող գործարար միջավայրից անցում դեպի այնպիսի միջավայր, որտեղ պետության կարգավորումներն ունեն համաչափ և հավասար կիրառություն, կայունություն և կանխատեսելիություն, իսկ բիզնես վեճերը կարգավորվում են արդարության սկզբունքով:

Հանրապետականն ընդգծում է օտարերկրյա ներդրումների՝ ներկայիս անբավարար մակարդակը: Այս ճանապարհին որպես առաջնահերթությամբ լուծվող խնդիրներ, նշվում են՝ ներդրումների պաշտպանության և դրա նկատմամբ վստահության մակարդակի բարձրացում, դրանց իրականացման լրացուցիչ հնարավորությունների ձևավորում, Հայաստանը որպես ապահով և շահեկան վայրի ճանաչելիության բարձրացում: Այդ նպատակով նախատեսվող առաջիկա քայլերն են՝ ստեղծել ներդրումային հիմնադրամ, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա ներկայացնել Հայաստանում «պետություն-մասնավոր գործընկերություն» արդյունավետ մոդելը:

Հանրապետական կուսակցությունը տնտեսական աճի խթանումը պայմանավորում է արտահանման գործընթացով: Հայաստանը, լինելով փոքր ներքին շուկայով երկիր, պետք է իր զարգացման մոդելը կառուցի: Խնդիր է այն, որ արտահանումը ՀՆԱ-ի կազմում ունի անբավարար տեսակարար կշիռ: Խնդրահարույց է արտահանման կենտրոնացման մեծ աստիճանն ինչպես շուկաների, այնպես էլ արտահանվող ապրանքատեսականու մասով: Անբավարար է դեպի հարևան պետություններ ապրանքների արտահանման ծավալը: Խնդրի լուծումը Հանրապետականը տեսնում է նեղ ուղղվածությամբ արտահանող տնտեսությունից անցում դեպի դիվերսիֆիկացված, արտահանման խթանման ենթակառուցվածքներով ապահովված, հարևան շուկաների պահանջարկին արագ արձագանքող տնտեսության: Արտահանումը պետք է լինի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժը՝ ՀՆԱ-ի կառուցվածքում ունենալով առնվազն 40-45 տոկոս տեսակարար կշռի ապահովում:

Երկրի ենթակառուցվածքների խնդիրներն են՝ տրանսպորտի ոլորտի և ճանապարհային ակտիվների պետական կարգավորման ոչ բավարար մակարդակը, ուղևորափոխադրումների ժամանակակից կառավարման համակարգի բացակայությունը, վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության ոլորտում խթանիչ ծրագրերի ու միջոցառումների ոչ բավարար մակարդակը, խմելու ջրի մատակարարման ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման անհրաժեշտությունը, երկրից սահմանափակ ուղղություններով իրականացվող չվերթերը: Նախատեսվող լուծումները՝ մշակել և իրականացնել Հայաստանի Հանրապետության ճանապարհային անվտանգության հնգամյա (2017-2021 թթ.) ծրագիր, ներմուծել ճանապարհային ակտիվների կառավարման նոր համակարգ, իրականացնել տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների արագընթաց զարգացման համալիր միջոցառումներ, ավիաընկերությունների համար ապահովել ազատ, մրցակցային պայմաններ, Վրաստանի ու Իրանի հետ առևտրի հնարավորություններն օգտագործելով իրականացնել անցումը նոր, ժամանակակից էլեկտրաէներգետիկական շուկայի, բարձրացնել խմելու ջրի մատակարարման ոլորտում մատուցվող ծառայությունների որակը:

Գյուղատնտեսության առկա խնդիրներն են՝ ժամանակակից ֆերմերների խավի ձևավորման խիստ ցածր տեմպերը, ինտենսիվ գյուղատնտեսության և առաջադեմ տեխնոլոգիաների ոչ բավարար տարածվածությունը, գյուղատնտեսության մեքենայացման ցածր մակարդակը, սուբսիդավորման մեխանիզմների ցածր արդյունավետությունը, գյուղատնտեսական արտադրանքի իրացման ոչ արդյունավետ համակարգը, չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի առկայությունը, գյուղացիական տնտեսությունների կոոպերացիայի ցածր մակարդակը, տնտեսավարողների ժամկետանց վարկերը: Արդյունքում՝ ցածր արտադրողական տնտեսություններն ի վիճակի չեն ապահովել բավարար կենսամակարդակ: Նախատեսվող լուծումները՝ բարձրացնել գյուղատնտեսական հողատարածքների նպատակային օգտագործման մակարդակը, հիմնել տարեկան մինչև 100 հեկտար պտղատու այգիներ, ավելացնել գյուղատնտեսությանը տրամադրվող վարկերի մատչելիությունը, իրականացնել գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման ծրագիր, ապահովել

գյուղատնտեսական տեխնիկայի նորացման մատչելի մեխանիզմներ, իրականացնել ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրեր, գինեգործական որակյալ արտադրանք թողարկելու նպատակով հաստատել ներկայացվող պահանջների և թույլատրելի գինեգործական մեթոդների ու մշակումների տեխնիկական կանոնակարգը: Գերկարևորություն է տրվելու սննդամթերքի անվտանգության հարցերին:

Զբոսաշրջության ոլորտի խնդիրներ. Հայաստանը համաշխարհային շուկայում դեռևս լավ ճանաչված չէ որպես զբոսաշրջային երկիր, տուրիստական ենթակառուցվածքները բավարար չափով զարգացած չեն, ուստի տուրիզմը չունի այն մասնակցությունը տնտեսության մեջ, որի ներուժն իրականում կա: Նպատակը համաշխարհային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային մրցունակության շարունակական բարձրացումն է, զբոսաշրջիկների աճի ապահովումը և համաչափ տեղաբաշխումը ամբողջ երկրում: Որպես լուծումներ առաջարկվում են արդյունավետ մարքեթինգային և խթանման միջոցառումներ, որոշ երկրների քաղաքացիների համար առանց մուտքի արտոնագրի ռեժիմի սահմանում, գործարար ներդրումային միջավայրի բարելավում:

ՀՀԿ-ն տնտեսության վրա շեշտադրում է կատարել նաև նախընտրական ծրագրում տեղ գտած այլ բաժիններում: Օրինակ, բանակը կարող է դառնալ տնտեսության շարժիչ ուժը, տեխնոլոգիական առաջընթացի լոկոմոտիվը: Քանի որ բանակը երկրի խոշորագույն սպառողներից մեկն է, ուստի այն չի կարող իր ազդեցությունը չունենալ երկրի տնտեսական առաջընթացի վրա:

Անդրադարձ կա նաև մեր հարևան երկրների՝ Իրանի և Վրաստանի հետ հարաբերություններին, շեշտը դնելով տնտեսական ողջ ներուժի իրագործման վրա: Նախընտրական ծրագրում առանձնահատուկ տեղ է հատկացվել Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությանը, որով, ըստ ՀՀԿ-ի, առավել լայն հնարավորություններ են բացվում տնտեսական զարգացման համար: Առանցքային է համարվել նաև Եվրոպական միության հետ համագործակցությունը մեր երկրում բարեփոխումներ իրականացնելու ճանապարհին և փոխգործակցության խորացումը՝ առաջիկայում ավարտելով բանակցությունները նոր իրավական շրջանակի շուրջ:

Կարևորվել է նաև շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և բնական պաշարների ողջամիտ օգտագործման միջոցով իրական կայուն տնտեսական աճի ապահովումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՂՈՐՏ

Պետության առաջնային հոգածության հարցը պետք է լինի սոցիալական պաշտպանության ոլորտը: Չնայած ոլորտում վերջին տարիներին արձանագրած արդյունավետության աճին և կոռուպցիոն ռիսկերի նվազմանը, դեռևս առկա են մի շարք խնդիրներ՝ ընտանիքի անապահովության գնահատման հասցեականության ոչ բավարար մակարդակը, նպաստների համակարգի՝ տվյալների բազայի անկատարությունը, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոչ բավարար մակարդակը, գործազուրկների խնդիրները: Այդ

համակարգը չի խրախուսում աշխատանքի ակտիվ որոնումը, շատ անապահով ընտանիքներ դուրս են մնում սոցիալական աջակցության պետական ծրագրերից:

ՀՀԿ-ի նպատակն է աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի արդյունավետ, թիրախավորված և թափանցիկ կառավարման համակարգի ձևավորումը: Նախատեսված լուծումներն են՝ զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և կառավարման արդյունավետության մեծացում, կամավոր աշխատանքի ինստիտուտի լիարժեք ներդրում, աշխատավարձի և սոցիալ-աշխատանքային նվազագույն երաշխիքների համակարգի արմատական վերանայում, սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգի ներդրում: Նախատեսվում է ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն:

Հայաստանի առողջապահական համակարգի խնդիրներն են՝ հատկացվող բյուջետային միջոցների և ստացված արդյունքների անհամաչափությունը, առողջապահական ենթակառուցվածքների և մասնագիտական ներուժի տարածքային անհամաչափ բաշխումը, որակյալ բժշկական օգնության և սպասարկման միասնական ստանդարտների բացակայությունը, հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման, որակի կառավարման գործուն մեխանիզմների արդյունավետության ցածր մակարդակը: Արդյունքում՝ ՀՀ քաղաքացին հաճախ ստիպված է հավելյալ վճարել պետության կողմից անվճար սահմանված ծառայությունների համար, առավել խոցելի խավերի համար հաճախ չի պահպանվում սոցիալական արդարության սկզբունքը:

Լուծումները հետեւյալն են: Ներկայում գործող բարձր սովերայնությամբ, ոչ շուկայական մեխանիզմներով իրականացվող գնման համակարգից անցում պետք է կատարվի նպատակայնության եւ հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման և որակի կառավարման գործուն մեխանիզմների վրա հիմնված առողջապահական համակարգի ձևավորման: Անհրաժեշտ է վերանայել բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող օրենսդրությունը, անվճար բժշկական օգնության հիմքում դնել անապահովության հանգամանքը և սոցիալական արդարության սկզբունքը, տեղայնացնել եվրոպական և ամերիկյան բժշկական ասոցիացիաների վավերացված գործելակարգերը, աստիճանաբար ներդնել բժշկական ապահովագրության ինստիտուտը: Մարդու առողջության պահպանման և կյանքի որակի բարձրացման համար պետք է ուժեղացնել պետության վերահսկողությունը շրջակա միջավայրի՝ օդի, ջրի որակի, կանաչ տարածքների պահպանման նկատմամբ, աղբամշակման բարձր չափանիշների սահմանմամբ:

ՀՀԿ-ն նախատեսում է իրականացնել երիտասարդության զբաղվածության ապահովման միջոցառումներ և սոցիալապես անապահով երիտասարդ ընտանիքների համար հատուկ աջակցության ծրագրեր: Երիտասարդների զբաղվածության խնդիրը լուծվելու է նոր աշխատատեղերի ստեղծման, ձեռներեցության խթանման և աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման ճանապարհով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՍՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Կոմունիստական կուսակցության նախընտրական ծրագիրը կազմում է 23674 նիշ, ինչը համապատասխանում է 13 էջին:

Նախընտրական ծրագրի տնտեսական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 11963 նիշ, ինչը համապատասխանում է 6,6 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 50,53 տոկոսն է:

Սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 5162 նիշ, ինչը համապատասխանում է 2,9 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 21,80 տոկոսն է:

Այսպիսով, նախընտրական ծրագրում տնտեսական և սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են ծրագրի ընդհանուր ծավալի 72,33 տոկոսը:

Բացի տնտեսական և սոցիալական հարցերից, Հայաստանի Կոմունիստական կուսակցության նախընտրական ծրագրում տեղ են գտել հետևյալ թեմատիկ բաժինները՝ «Արտաքին քաղաքականություն», «Ներքին քաղաքականություն», «Հայկական բանակ», «Գիտություն և կրթություն», «Ենթակառուցվածքներ»:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Հայաստանի Կոմունիստական կուսակցությունն իր նախընտրական ծրագրում հայտարարում է, որ հանդես է գալու տնտեսական քաղաքականության մեջ արմատական փոփոխություններ մտցնելու՝ պետության կարգավորիչ դերը բարձրացնելու պահանջով: Ինդուստրացումը լինելու է տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունը՝ սկսած ներպետական կոոպերացիայից մինչև ԵԱՏՄ երկրների հետ միասնական արդյունաբերական քաղաքականության իրականացում:

Կոմունիստները մերժում են ոչ արդյունավետ ազատական տնտեսական քաղաքականությունը, որն իրենց գնահատմամբ՝ հանգեցրել է հասարակության սոցիալական գերբեռնացմանը՝ մի խումբ հարուստների և հսկայազանգված աղքատների: ՀՀԿ-ն նախատեսում է իրականացնել հարկային ճնշման իջեցման արդյունավետ քաղաքականություն՝ նպաստելով տնտեսվարողների կողմից հարկերի թափանցիկ վճարմանը և կոռուպցիայի նվազեցմանը: Պետական կարգավորմամբ վարվելու է արդյունավետ մոբիլիզացիոն քաղաքականություն՝ հասնելով ՀՆԱ-ի 7-8% տարեկան աճի: Խստագույնս հսկվելու է մենաշնորհների գործունեությունը, մասնավորապես՝ գազի, ջրի, էլեկտրաէներգիայի և այլ ծառայությունների կորուստների չափաքանակները՝ հաստատելով նորմատիվային սահմաններ:

Փաստացի ներկայացնելով ոչ հեռու անցյալում Հայաստանի ունեցած հզոր արդյունաբերական ներուժը և այն համեմատելով տվյալ ոլորտի այսօրվա ակնհայտ նվազող ցուցանիշների հետ, ՀԿԿ-ն առաջարկում է ընդունել օրենք

«Արդյունաբերական քաղաքականության մասին», դրան զուգահեռ ստեղծելով Արդյունաբերության և արտաքին առևտրի նախարարություն՝ ֆունկցիոնալ-ճյուղային գործառնություններով: Կոմունիստներն անհրաժեշտ են համարում խրախուսել բաժնետիրական ընկերությունների ստեղծումը՝ պետության, տնտեսվարող սուբյեկտների և այլ ներդրողների մասնակցությամբ, ինչպես նաև պետական ակտիվ միջամտություն ցուցաբերել ռազմավարական նշանակության գործարանների գործարկման եւ դրանց աշխատանքները արդյունավետ դարձնելու համար: Կոմունիստները անհրաժեշտ են համարում խթանել տնտեսական զարգացումը մարզերում՝ հայտարարելով ադետ ապրած Շիրակը և սահմանային Տավուշը ազատ տնտեսական գոտիներ:

Գյուղատնտեսության ոլորտում ՀԿԿ-ն առաջարկում է պետական աջակցությամբ գյուղացուն տրամադրել ցածր՝ 2-3 տոկոսով երկարաժամկետ վարկեր, իսկ նրա աշխատանքը կենսաթոշակի անցնելու ժամանակ հաշվել որպես աշխատանքային ստաժ: Կոմունիստները նախատեսում են աջակցել գյուղացիական տնտեսություններին կամավորության սկզբունքով տնտեսվարման ընկերություններ՝ կոոպերատիվներ և համագործակցության այլ միավորներ ստեղծելու հարցում, սուբսիդավորել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: Առաջարկվում է նաև ստեղծել տոհմաբուծական և սերմնաբուծական տնտեսություններ, ինչպես նաև սպառողական կոոպերացիայի համապետական միավորում (Հայկոոպ)՝ գյուղատնտեսական արտադրանքների տեղական շուկայում մեծածախ իրացմանը և արտահանմանը նպաստելու համար:

Արձանագրելով, որ ՀՀ պետական պարտքը կազմում է 5,93 մլրդ ԱՄՆ դոլար և որ արտաքին պարտքի ու ՀՆԱ-ի հարաբերությունը անցել է 50%-ի սահմանը, կոմունիստները խիստ մտահոգիչ են համարում Հայաստանը ոչ վարկունակ երկիր ճանաչելու վտանգը: ՀԿԿ-ի գնահատմամբ՝ Հայաստանի առևտրային բանկերի վարկերի տոկոսադրույքները չեն նպաստում տնտեսության զարգացմանը: Այդ առնչությամբ առաջարկվում է արդյունաբերությանը տրամադրել երկարաժամկետ վարկեր՝ ցածր տոկոսադրույքներով: Կոմունիստները անհրաժեշտ են համարում շարունակաբար իջեցնել Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքները և վերջինիս կողմից խիստ վերահսկողություն սահմանել առևտրային բանկերի վարկերի ձևակերպման նորմատիվային գործառնությունների նկատմամբ՝ ելակետ ունենալով տնտեսության արդյունավետ զարգացումը: Կոմունիստներն առաջարկում են նաև Հայաստանի բանկերում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ավանդագրված գումարները (1,7 տրիլ. դրամ), ավանդատուների համաձայնությամբ, վերածել շահավետ բաժնետոմսերի՝ տնտեսության շահութաբեր ոլորտներում ներդնելու համար:

ՀԿԿ-ն փաստում է Հայաստանում առկա կոռուպցիայի և ստվերայնության բարձր մակարդակը՝ գնահատելով այն 30%-ից ավելի և արձանագրում, որ բյուջետային մուտքերը չեն հավաքագրվում առնվազն 1 մլրդ դոլարի չափով, ինչը խոչընդոտում է տնտեսության զարգացմանն ու սոցիալական ծրագրերի կատարմանը: Եկամտահարկի գործող հարթ հարկահավաքությունը չի նպաստում սոցիալական արդարության ապահովմանը, ուստի անհրաժեշտ է կիրառել եկամուտների

պրոգրեսիվ հարկահավաքություն: Բյուջեն գերազանցապես պետք է ձևավորվի ուղղակի հարկերով՝ եկամտահարկ, շահութահարկ և այլն, ինչը կկանխորոշի տնտեսության զարգացման միտումները: Կոմունիստներն առաջարկում են ընդունել օրենք, որը հարկային գործառույթներով կկարգավորի երկար տարիներ չօգտագործվող անշարժ գույքի (գործարան, ձեռնարկություն և այլն) և հողի անարդյունավետ օգտագործումը: Կարևորվում է նաև հարկային ուղղորդիչ քաղաքականությամբ նպաստել փոքր ու միջին բիզնեսի կայացմանն ու զարգացմանը:

Գնահատելով ավիացիայի ներկա վիճակը և այն համեմատելով Խորհրդային Հայաստանում տվյալ համակարգի զարգացման մակարդակի հետ, կոմունիստները շեշտում են, որ գործող «Բաց երկնքի» քաղաքականությունը ժամանակավրեպ է և չի նպաստում ոլորտի առաջընթացին: ՀԿԿ-ն առաջարկում է հայկական ավիացիայի վերածննդի համար վճռական քայլեր կատարել՝ առաջին հերթին բարեփոխելով ոլորտը կարգավորող օրենքը:

Կոմունիստները կարևորում են Հայաստանի երկաթգծի զարգացման հարցը՝ առաջարկելով միջոցներ հատկացնել և ծախսերի 50/50 համամասնությամբ Ռուսաստանի Դաշնության երկաթգծի հետ կառուցել Վանաձոր-Ֆիոլետովո 31.2 կմ երկարությամբ նոր երկաթգիծը, որի գործարկմամբ 100-150 կիլոմետրով կկրճատվի Հայաստանի բերվող և առաքվող բեռների ճանապարհը, իսկ բեռնափոխադրման սակագինը կնվազի 25-27%: ՀԿԿ-ն անհրաժեշտ է համարում նաև կոնկրետ քայլեր ձեռնարկել՝ սկսելու Հայաստան-Իրան երկաթգծի շինարարությունը, ինչպես նաև կարճ ժամանակահատվածում կարգի բերել Հայաստանի միջմարզային, միջհամայնքային ճանապարհները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՈՐՏ

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը համոզված է, որ ոչ վաղ անցյալի հասարակության տնտեսական զարգացման վիթխարի փորձի հիման վրա կարող է մշակել և իրականացնել սոցիալական ոլորտի արմատական վերափոխումներ, որոնք կապահովեն բարեկեցիկ կյանքի պայմաններ:

Արձանագրելով, որ բնակչության 1/3-ը համարվում է աղքատ, որ ըստ պաշտոնական վիճակագրության՝ գործազրկության մակարդակը 18%-ից ավելին է և որ վերջին 2 տարում երկրից արտագաղթել են ավելի քան 24 հազար քաղաքացի, կոմունիստները խոստանում են 2017-2022 թվականներին նվազագույն աշխատավարձը և թոշակների հաշվարկման նվազագույն բազան բարձրացնել առնվազն երկու անգամ:

ՀԿԿ-ն առաջարկում է փոխել մայրության՝ երեխայի խնամքի համար նպաստի տրման ներկայիս համակարգը և ընդունել օրենք մայրական կապիտալի մասին: Կոմունիստներն անհրաժեշտ են համարում պետական աջակցություն ցուցաբերել երիտասարդ ընտանիքներին բնակարան ձեռք բերելու հարցում՝ տրամադրելով երկարաժամկետ վարկեր՝ 20 տարուց ավելի ժամկետով և նվազագույն

տոկոսադրույքով, ինչպես նաև առաջնահերթ պայմաններ ստեղծել երիտասարդներին աշխատանքով ապահովելու համար:

Բնակարանային կոմունալ ծախսերը, ըստ ՀԿԿ ծրագրի, չպետք է գերազանցեն բնակչության եկամուտների 10-15 տոկոսը:

ՀԿԿ-ն իր ծրագրում նախատեսում է բարձրացնել Հայաստանի արհեստակցական միությունների դերն ու հեղինակությունը աշխատավորների իրավունքների ու շահերի պաշտպանության գործում, վերանայել «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը՝ դրանք համապատասխանեցնելով Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների պահանջներին:

Առողջապահության համակարգին 2017 թվականին հատկացվել է պետական բյուջեի ծախսային մասի 4,3 տոկոսը (85,7 մլրդ դրամ), ինչը, կոմունիստների գնահատմամբ, առաջացնում է լրջագույն խնդիրներ մարդու առողջության վերականգնման և պահպանման հարցերում: Վճարովի բուժումը, պետպատվերի սահմանափակությունը ու համաֆինանսավորման գործող համակարգը սոցիալապես անապահով խավերին գրկում է լիարժեք բուժման հնարավորությունից: Պետական պատվերը շատ հիվանդությունների՝ հատկապես չարորակ նորագոյացություններով հիվանդների (նրանց թիվը 8500-ից ավելի) բուժելու համար, լավագույն դեպքում, ապահովում է ծախսերի 30%-ը, արձանագրում են կոմունիստները՝ առաջարկելով առողջապահական համակարգում արմատական բարեփոխումներ իրականացնել եւ ընդունել գերակա ուղղություն՝ առաջին հերթին օգնել սոցիալապես անապահով, սոցիալապես չօգտվող մարդկանց: Առաջարկվում է նաև բարեփոխել առողջապահական ապահովագրության համակարգը՝ ստեղծելով առողջապահական հիմնադրամ, պետական, բարեգործական և այլ միջոցների ներարկման հաշվին: ՀԿԿ-ի ծրագրում նախատեսվում է ՀՆԱ-ի շարունակական աճին զուգընթաց մեծացնել անվճար բուժօգնության ֆինանսական հատկացումները: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է համարվում մեծացնել դեղերի (մանավանդ նախակլինիկական փորձաշրջանն անցած դեղամիջոցների) տեղական արտադրության ծավալները, ինչպես նաև դեղերի վրա չկիրառել ավելացված արժեքի հարկը, ինչը կնվազեցնի դրանց գինը և ավելի մատչելի կդարձնի նախևառաջ սոցիալապես անապահով խավերի համար:

«ՕՀԱՆՅԱՆ-ԲԱՖՖԻ-ՕՍԿԱՆՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ

«Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքի նախընտրական ծրագիրը կազմում է 52548 նիշ, ինչը համապատասխանում է 29 էջին:

Նախընտրական ծրագրի տնտեսական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 7711 նիշ, ինչը համապատասխանում է մոտ 4,3 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 14,67 տոկոսն է:

Սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 4859 նիշ, ինչը համապատասխանում է մոտ 2,7 էջին, որը ընդհանուր ծավալի 9,25 տոկոսն է:

Այսպիսով, նախընտրական ծրագրում տնտեսական և սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են ծրագրի ընդհանուր ծավալի 23,92 տոկոսը:

Բացի տնտեսական բաժնից «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքի նախընտրական ծրագիրը ներառում է նաև «Պետական կառավարում, քաղաքական համակարգ եւ մարդու իրավունքներ», «Բանկային համակարգ», «Դատախիրավական համակարգ», «Քաղաքացիական հասարակություն», «Գիտություն և կրթություն», «Մշակույթ», «Բանակ», «Արտաքին քաղաքականություն», «Արցախ», «Ուժեղ Հայաստան՝ գորեղ Սփյուռք», «Երիտասարդությունը, սպորտը եւ պետության առաջընթացը», «Ազատական տնտեսություն՝ ազատ լրատվամիջոցներ» թեմատիկ բաժինները:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՈՐՏ

«Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքի տնտեսական ոլորտի կարգախոսն է՝ «Հզոր տնտեսություն՝ հզոր Հայաստան»: «Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման կարեւոր բաղադրիչներից է նրա տնտեսությունը, որն այսօր գտնվում է ծանր եւ ճգնաժամային վիճակում», - իր նախընտրական ծրագրում ամրագրել է «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքը՝ իրավիճակից դուրս գալու համար առաջարկելով իր բնորոշմամբ՝ արմատական բարեփոխումներ:

Մասնավորապես՝ դաշինքը սահմանել է «365 օր՝ ամենօրյա փոփոխությունների ժամանակացույց», որտեղ առաջնությունը տվել է արհեստական մենաշնորհների արատավոր համակարգի վերացմանը, հարկային նոր օրենսգրքով տնտեսական նոր որակի հարաբերությունների ձևավորմանն ու տեղական արտադրողին աջակցող դրամա-վարկային քաղաքականությանը, մաքսակետերի աշխատանքի արմատական բարեփոխմանը, փոքր ու միջին բիզնեսի աջակցությանը: Պետական գնումների ու ծախսային քաղաքականության հատվածում նախատեսվում է կոշտ վերահսկողություն և «լեզալ» կոռուպցիոն մեխանիզմի գործարկման բացառում: Ժողովրդավարական բարեփոխումների արդյունքում «ՕԲՕ» դաշինքն առաջարկում է Հայաստանը կրկին ընդգրկել «Հազարամյակների մարտահրավեր» տնտեսական ծրագրում:

Արդյունաբերության եւ էներգետիկայի ոլորտներում դաշինքը նախատեսում է իրականացնել թեթեւ արդյունաբերության զարգացմանն ուղղված արմատական քայլեր, խթանել տեղական հումքի վրա հիմնված ռեսուրսախնայողական ու գիտատար արդյունաբերության զարգացումը: Երկրի էներգետիկ անկախությունն ապահովելու նպատակով դաշինքը խրախուսելու է այլընտրանքային (արեւային, քամու եւ գեոթերմալ) էներգետիկայի զարգացումը: Կառուցապատումների պետական թույլատվության տրամադրման ընթացակարգերում օրենսդրորեն ամրագրվելու են էներգախնայողության եւ ջերմամեկուսացման պարտադիր չափորոշիչները՝ ջեռուցման վրա կատարվող տարեկան էներգածախսը կրճատելով շուրջ 30 տոկոսով: Հարկա-մաքսային գործիքներով դաշինքը նախատեսում է

խրախուսել հանքարդյունաբերությունում հանքանյութից օգտակար հանածոների առավել խորը կորզումը եւ դրանից վերջնական արտադրանքի պատրաստումը:

Գյուղատնտեսության բնագավառում դաշինքն առաջարկում է հարկային մեղմ քաղաքականություն, որի կիրառմամբ կբարձրանա արտադրության արդյունավետությունն ու կիջնի ինքնարժեքը՝ նպաստելով պարենային անվտանգության ապահովմանը: Կարևորվում է ապահովագրական համակարգի ներդրումը, գյուղատնտեսական կոոպերատիվ տնտեսությունների ստեղծումը:

Հատուկ կարգավիճակ կտրվի սահմանամերձ բնակավայրերին: Դաշինքն առաջարկելու է փոփոխություններ ու լրացումներ կատարել «Հողի հարկի մասին» և գյուղատնտեսական այլ ոլորտներին վերաբերող օրենքներում՝ սահմանամերձ, բարձրլեռնային տարածքներում արտոնություններ տրամադրելու նպատակով: Իրականացվող գործնական քայլերն են լինելու՝ օժանդակությունը գյուղմթերքների արտադրությանն ու արտահանմանը, ինչպես նաև գյուղմթերքներ վերամշակող արտադրությունների սուբսիդավորումը: Ներդրվելու է վարկավորման արդյունավետ համակարգ, կիրառվելու է գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների պետական սուբսիդավորում մինչև 50% չափով: Հատուկ արտոնյալ վարկավորման ու հարկային պայմաններ են կիրառվելու բարձրլեռնային եւ սահմանամերձ գոտիներում գործող գյուղացիական տնտեսությունների համար: Կատարվելու են վերոհիշյալ օրենսդրական փոփոխությունները: Ստեղծվելու է գյուղատնտեսության եւ ֆերմերային տնտեսությունների ապահովագրական ճկուն համակարգ: Պետական հսկողությամբ մթերող ձեռնարկություններում ներդրվելու է որակի ստուգումներ իրականացնող համակարգ, որով կպաշտպանվեն գյուղացու շահերը եւ կբացառվեն կամայական գործողությունները:

Բանակի հզորացման համար անհրաժեշտ է համարվում զարգացնել բանակահեն տնտեսություն՝ կառուցելով այն բարձր տեխնոլոգիաների եւ ժամանակակից գիտելիքների վրա:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՈՐՏ

«Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքը սոցիալական խնդիրների լուծումը պատկերացնում է բիզնես միջավայրի բարելավման, պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման եւ հասցեական սոցիալական քաղաքականության միջոցով:

Ըստ դաշինքի՝ այսօր ամենախոցելի շերտերից մեկը թոշակառուներն են՝ ցածր թոշակներով: Կենսաթոշակառուների խնդիրների լուծման առաջին քայլերից մեկը կենսաթոշակները արժեզրկումից զերծ պահելն է: Այս նպատակն իրականություն դարձնելու համար դաշինքն առաջարկում է կենսաթոշակների ինդեքսավորում, ինչը նախատեսում է արժեզրկման չափով ինդեքսավորման լրացուցիչ գումար:

Դաշինքի սոցիալական քաղաքականությունը իրականացվելու է հետևյալ ուղղություններով՝ աղքատության մակարդակի էական նվազեցում, սոցիալական

բեւեռացվածության մեղմում, արժանապատիվ ծերություն ապահովող համակարգի ներդրում, բնակչության կյանքի որակի բարձրացում, բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձերի ինդեքսավորում:

Առողջապահության ոլորտում դաշինքն առաջարկում է օրենսդրական դաշտի կատարելագործում եւ բյուջետային քաղաքականության միջոցով էական դրական տեղաշարժերի արձանագրում: Բուժսպասարկումը մատչելի դարձնելու նպատակով կարևորվում է պարտադիր եւ կամավոր բժշկական ապահովագրության համակարգի ներդրումը: Կարևորվում է նաև պոլիկլինիկաներում եւ Շտապ օգնության ծառայությունում աշխատողների աշխատավարձերի բարձրացումը:

Դաշինքը հատուկ տեղ է տվել անապահով խավերի առողջության պահպանման հասցեական քաղաքականությանը, ըստ որի՝ պետական միջոցները պետք է ուղղակիորեն հատկացվեն հիվանդներին՝ հնարավորություն տալով ինքնուրույն ընտրել բուժհաստատությունը: Կարևորվում է հիվանդությունների կանխարգելման քաղաքականությունը պոլիկլինիկաների ակտիվ գործունեության, ինչպես նաև առողջ ապրելակերպի մշտական քարոզի միջոցով, նաև օրենսդրորեն ապահովելով պետական ծառայողների աշխատանքային պաշտպանվածությունը:

Դաշինքն իր նախընտրական ծրագրում անդրադարձել է ազատամարտիկների սոցիալական խնդիրներին՝ ներկայացնելով նրանց որպես անկախ պետականության հիմքը, ժողովրդի անվտագությունը եւ փառապանծ հաղթանակը կերտողներ: Ազատամարտիկների սոցիալական ապահովությանն ուղղված քայլերն են՝ հստակ մեխանիզմների ներդրմամբ, նրանց եւ նրանց ընտանիքի անդամներին ապահովել արժանապատիվ եւ բարեկեցիկ կյանքով, լուծել բուժման եւ առողջության վերականգնման խնդիրները, ապահովել աշխատատեղերով, այդ թվում մասնավոր գործարարության միջոցով:

Արտագաղթը կանգնեցնելու եւ այն ներգաղթով փոխարինելու համար դաշինքն առաջարկում է համալիր միջոցառումներ, որոնց թվում են՝ նոր տնտեսական քաղաքականությունը, արդարադատության իրականացումը, օտարերկրյա եւ տեղական ներդրումներով աշխատատեղերի ստեղծումը:

Համալիր ծրագրեր է նախատեսվում նաև երիտասարդ ընտանիքների աջակցության համար. առաջին երեխայի ծնունդից հետո ծնողներին տրամադրել 100 000 հազար դրամ, երկրորդի դեպքում՝ 500 000, երրորդի դեպքում՝ 1 միլիոն դրամ, չորրորդի դեպքում՝ 2 միլիոն դրամ: Ձեւավորել «3 միլիոն դրամանոց» մայրական կապիտալի անձնական հիմնադրամ, որը ծնողը կօգտագործի բացառապես չորրորդ երեխայի համար, իսկ երեխայի ծննդյան ամենամսյա նպաստը 18 000 դրամից կհասցվի 30 000-ի եւ կվճարվի մինչեւ երեխայի երեք տարին լրանալը:

Դաշինքը նախատեսում է նաև ուսման եւ գիտական գործունեության մեջ հաջողությունների համար խրախուսման միջոցների ու անվանական կրթաթոշակների համակարգ՝ սոցիալապես անապահով եւ գերազանցիկ

ուսանողների համար էական գեղչերի կիրառում, արտոնյալ ու մատչելի բնակարանային հիփոթեքային վարկերի տրամադրում:

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության նախընտրական ծրագիրը կազմում է 17867 նիշ, ինչը համապատասխանում է մոտ 10 էջին:

Նախընտրական ծրագրի տնտեսական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 4699 նիշ, ինչը համապատասխանում է 2,6 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 26,3 տոկոսն է:

Սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են 3193 նիշ, ինչը համապատասխանում է 1,8 էջին, որը ծրագրի ընդհանուր ծավալի 17,87 տոկոսն է:

Այսպիսով, նախընտրական ծրագրում տնտեսական և սոցիալական հարցերին վերաբերող հատվածները կազմում են ծրագրի ընդհանուր ծավալի 44,17 տոկոսը:

ՀՅԴ նախընտրական ծրագրում տնտեսական հարցերը արծարծված են երկու բաժիններում՝ «Մարդը և պետությունը», «Բիզնեսը և պետությունը»: Բացի սրանցից կուսակցության ծրագրում տեղ են գտել **«Պետական կառավարում», «Արցախ», «Անվտանգություն», «Արտաքին քաղաքականություն»** թեմատիկ բաժինները:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՈՐՏ

ՀՅԴ բնորոշմամբ, Հայաստանի տնտեսական քաղաքականությունը, անկախության վերականգնումից ի վեր, հիմնված է եղել ինքնակարգավորվող շուկայի լիբերալ գաղափարախոսության և «անցումային տնտեսության» մոտեցման վրա, սակայն պետությունն ուսերից թողափել է պատասխանատվությունն իր քաղաքացիների նկատմամբ, թողնելով, որ վայրի մրցակցության մեջ հաղթի «ուժեղը»՝ առանց հոգալու «պարտվածների» ճակատագրի մասին:

ՀՅԴ-ն ընդգծում է, որ առկա պայմաններում տնտեսական աճի բարիքներից օգտվում է ընդամենը «հաղթողների» մի փոքրիկ խումբ, ապա եզրահանգում, որ պետությունն իրեն օտարեց քաղաքացուց, իսկ քաղաքացին օտարվեց պետությունից:

ՀՅԴ-ն առաջարկում է արմատապես փոխել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տրամաբանությունը, անցում կատարելով նոր Մահմանադրությամբ ամրագրված սոցիալական շուկայական տնտեսակարգին՝ ապահովելով տնտեսական աճի և ստեղծված տնտեսական արդյունքի արդար բաշխումը հասարակության բոլոր անդամների միջև, ստեղծել այնպիսի մեխանիզմ, որը կբացառի բնական ռեսուրսների գերշահագործումը, կապահովի դրանց համալիր կառավարումը:

Միեւնույն ժամանակ ՀՅԴ-ն համոզված է, որ պետությունը պետք է կանգնի գործարարի կողքին, աջակցի նրան, ապահովի մրցակցության արդար պայմաններ և գործարարության հստակ կանոններ: Ընդ որում՝ պետությունը պետք է պատրաստ լինի մասնավորի հետ համագործակցաբար կիսել բիզնես ռիսկը, առաջնորդել այն բնագավառներում, որտեղ այդ ռիսկն ավելի մեծ է, կամ որտեղ շահութաբերությունը ավելի ցածր է կամ մասնավոր ֆինանսավորումը բացակայում է: ՀՅԴ-ն վկայակոչում է աշխարհում գործող ամենալիբերալ ու պահպանողական քաղաքական ուժերի օրինակը, որոնք աջակցում են իրենց երկրների ձեռնարկություններին, մինչդեռ մեր դեպքում դրանք միայնակ են համաաշխարհային մրցակցության մեջ:

ՀՅԴ-ն առաջարկում է ստեղծել արդար պայմաններ ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար: Փոքր և միջին ձեռնարկությունները, որոնք ոչ միայն եկամուտ և աշխատանք են ապահովում, հաճախ խոշոր ընկերությունների գոհ են դառնում: Բանկերը, վարկային կազմակերպությունները, տնտեսական առաջընթացն ապահովելու փոխարեն հաճախ նմանվում են վաշխառուների՝ անիրատեսական և ստրկացնող վարկավորման պայմաններով:

Կուսակցությունն առաջարկում է ռազմավարական և սոցիալական նշանակություն ունեցող ձեռնարկությունների հետ, պետություն-մասնավոր հատված գործընկերության շրջանակներում, կիսել բիզնես ռիսկը, վերանայել տնտեսական հարցերում պասիվ դիտորդի իր կարգավիճակը և առավել ակտիվորեն աջակցել այդ ձեռնարկություններին, նրանց հետ ստեղծել համատեղ ընկերություններ, տրամադրել վենչուրային ֆինանսավորում, փոխառություններ և այլ արտոնություններ:

ՀՅԴ-ն առաջարկում է ուժեղացնել մենաշնորհների և անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարը՝ խստացնելով պատիժների համակարգը և երաշխավորելով ազատ մուտքը շուկա, ինչպես նաև թեթևացնել տեսչական բեռը՝ ընդգծելով, որ ստուգումները պետք է ուղղված լինեն միայն անբարեխիղճ տնտեսավարողների դեմ և չպետք է մահակ դառնան բարեխիղճ ձեռնարկությունների գլխին: Կուսակցությունն առաջարկում է կրթական պետական պատվեր ձևավորելիս առաջնորդվել տնտեսության արդի և հեռանկարային կարիքներով՝ անհրաժեշտ համարելով, որ բիզնեսը, գիտական ու կրթական համակարգերը սերտորեն համագործակցեն:

Կուսակցությունն առաջարկում է նաև վերանայել բնական մենաշնորհների կողմից տրամադրվող ծառայությունների գները՝ արձանագրելով, որ կիրառվող գներն իրատեսական ու մատչելի չեն շատ ձեռնարկատերերի համար, ինչով և ապահովում են բնական մոնոպոլիաների գերշահույթը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՈՐՏ

ՀՅԴ-ն, որպես Հայաստանում սոցիալական ծանր վիճակի արդյունք, առաջին հերթին մատնանշում է վիթխարի ծավալների հասնող արտագաղթը, երբ հայ մարդը, չգալով սեփական հայրենիքի հոգածությունը, իր ապագան փորձում է կապել այլ երկրների հետ: Կուսակցությունը անհրաժեշտ է համարում արմատապես փոխել երկրի

սոցիալ-տնտեսական զարգացման տրամաբանությունը, վերականգնել պետության և քաղաքացու պատասխանատվությունը միմյանց հանդեպ:

Կուսակցությունն առաջնահերթ է համարում մարդու աշխատանք ունենալու իրավունքի իրացումը՝ արժանապատիվ կյանքով ապրելու համար, աշխատանքի նվազագույն վարձատրություն սահմանելով ոչ ավելի ցածր, քան կենսաապահովման զամբյուղը: Դաշնակցությունն ուշադրություն է հրավիրում կյանքի դժվար պայմաններում հայտնված անձանց վրա՝ առաջարկելով, որ նրանց մուտքն աշխատաշուկա ապահովելու, ինչպես նաև տարեցների բարեկեցիկ ծերությունը երաշխավորելու համար պետությունը ակտիվ քաղաքականություն իրականացնի:

ՀՅԴ-ն առաջարկում է ստեղծել առողջապահական ապահովագրության մի համակարգ, որի դեպքում յուրաքանչյուրը կկարողանա օգտվել բուժում ստանալու հնարավորությունից: Անդրադառնալով արտագաղթի թեմային, կուսակցությունն առաջարկում է այն կանխելու նպատակով ստեղծել հնարավորություններ, որ հայոց բանակում ծառայած և իր կյանքը հանուն անկախության ու ժողովրդի բարօրության վտանգած յուրաքանչյուր երիտասարդ կարողանա հոգալ իր բնակարանային ապահովվածության ու աշխատանքի կարիքները: Կարևոր տեղ է հատկացված նաև ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող անձանց հասարակության լիարժեք անդամ դարձնելու, նրանց կրթություն ստանալու, աշխատելու, տեղաշարժի իրավունքները իրականացնելու խնդիրներին: Երիտասարդ ընտանիքների կայացմանը նպաստելու համար կուսակցությունն առաջարկում է ապահովել նրանց սոցիալ-տնտեսական, բնակարանային պահանջները՝ ահազանգելով, որ ցածր զբաղվածության և այլ պատճառներով ուշ ամուսնություններն ու ցածր ծնելիությունը երկիրը կանգնեցրել են ժողովրդագրական աղետի եզրին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների ու դաշինքների ծրագրերի դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ այդ ուժերը բավական մեծ տեղ են հատկացրել տնտեսական և սոցիալական խնդիրներին: Դա կարող է պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ վերջին ամիսներին հանրությանը հայտնի դարձան երկրի տնտեսության իրական ցուցանիշները, որոնք վկայում են խորը ճգնաժամի մասին: Իսկ դրա հետևանքն էլ ավելի ահազանգող սոցիալական վիճակն է: Այս պայմաններում ե՛ւ իշխող, ե՛ւ հատկապես ընդդիմադիր ուժերը չէին կարող իրենց ծրագրերում պատշաճ ուշադրություն չդարձնել այդ երկու կարևորագույն ոլորտներին:

Դիտարկման քանակական տվյալները վկայում են, որ ընտրություններին մասնակցող գրեթե բոլոր կուսակցություններն ու դաշինքներն ավելի շատ տեղ են տվել տնտեսական, քան սոցիալական թեմաներին: Թեև այս երկու ոլորտները սերտորեն փոխկապակցված են, այդուհանդերձ, ըստ քաղաքական ուժերի ծրագրերի՝

միայն տնտեսական առաջընթացի պարագայում հնարավոր կլինի բարելավել սոցիալական պայմանները:

Միևնույն ժամանակ, թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական խնդիրներին անդրադառնալիս կուսակցություններն ու դաշինքները չեն խուսափել պոպուլիստական խոստումներից եւ զուտ հոչակագրային դրույթներից, իսկ որոշ դեպքերում՝ այդ հատվածներն ուղղակի բարի ցանկությունների նկարագրություն են: Կոնկրետ թվերով հիմնավորված հաշվարկներն ու համոզիչ փաստարկները հազվադեպ են:

Նշված թերություններով հանդերձ, ներկայացված ծրագրերը որոշակի պատկերացումներ են տալիս ընտրապայքարի մեջ մտած քաղաքական ուժերի մոտեցումների մասին եւ կարող են նպաստել քաղաքացիների տեղեկացված լինելուն ու գիտակցված ընտրություն կատարելուն: